№ 116 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27

1907

ԵՐԵՍՈՒՆ-ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 № 116

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի։ Կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak"

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ

ԵՐԵՔ րուբլի

Մի ամսվայ համար 1 րուբլի

„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ"

խմբագրութիւնը յայտնում է, որ թերթը կը վերսկսվի հոկտեմբերի 7-ին։ Բաժանորդագրութեան տետրի կորած լինելու պատճառով՝ խնդրում է իր բաժանորդներից, որքան կարելի է շուտով, նորոգել իրանց հասցէները, նշանակելով նոյնպէս իրանց վճարած գումարի քանակը։

առ. 1—3

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Վերադառնալով կովկասեան հանքային ջրերից՝ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 1—3 ժ., երեկ. 6—8 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։

առ. (ա. օ.)

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ

Դիմել՝ Грибоѣдовская № 16, Խմբ. «Երկրի Ձայնի»։ (օ.մ) առ 3—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընտրութիւնների առիթով. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Փոքրիկ նկատողութիւններ. Թուրք կեանքի և կեանքի գրականութեան շուրջը. Պետական Դումայի ընտրութիւնների մասին. Դատաստանական դահլիճից. Թատրօն և երաժշտութիւն. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ռուսաստանի կեանքից. Նամակ խմբագրութեան. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Թիւրքահայկական հարցը. Նամակ Անգլիայից. Արտաքին լուրեր Պարսկաստան, Թիւրքիա. Բօլգարիա. Չերնօգօրիա. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Հացի մատակարարութեան խնդրի առիթով։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Այսօր Թիֆլիսում տեղի պէտք է ունենան պատուիրակների ընտրութիւններ։

Այդ պատուիրակները՝ միացած ամբողջ նահանգի միւս պատուիրակների հետ՝ ապագայում կընտրեն մի պատգամաւոր Թիֆլիսի նահանգից Պետական Դումայի համար։

Թէ Թիֆլիսի և թէ առհասարակ կովկասեան ընտրութիւնների առիթով հանդէս չեկան ծրագիրներ պատգամաւորի գործունէութեան մասին։ Ոչ ոք չը փորձեց քննելու, թէ ինչ պէտք է անէ կովկասեան պատգամաւորը Պետական Դումայում, ինչ խնդիրներ պէտք է նա առաջ մղէ և առհասարակ ինչ սպասելիքներ նա կարող է ունենալ Պետական Դումայից թէ մեր երկրի և թէ ընդհանրապէս պետութեան համար։

Հասարակական կեանքի արտայայտութիւնը այնպիսի բնաւորութիւն է ստացել, որ կարծես իւրաքանչիւր մարդ թողնում է ամեն բան իրերի ընթացքին և ինքը չէ նախագծում ոչ մի նախնական ծրագիր առաջիկայի համար։

Սակայն սխալ կը լինէր կարծել, թէ ծրագիրներ չը կան ընտրողների կամ ընտրվածների առաջ։ Նրանք կան, թէև այս անգամ որոշակի գծերով չեն ձևակերպված։

Բանն այն է, որ Պետական Դուման ունեցել է արդէն երկու նստաշրջան, որոնք անկատար են թողել այն բոլոր ծրագիրները, որ մշակված էին զանազան կուսակցութիւնների կողմից։ Այդ ծրագիրների մշակութիւնը շատ մեծ ժամանակ և աշխատանք էր խլել գործող մարդկանցից։ Յանձնաժողովների և առանձին անհատների պատրաստած զեկուցումները պարզաբանել էին շատ խնդիրներ, որոնք պէտք է գործնական լուծման ընթացք ստանային։ Բայց Դումայի գործավարութեան ընդհատումը, որ տեղի ունեցաւ [illegible] պատգամաւորների եռանդուն աշխատանքի ժամանակ, յետաձգեց այդ ծրագիրների քննութիւնը։

Եւ բնական է, որ պետութեան զանազան մասերում գործող անձեր սպասում են, որ կազմակերպվի և ամրանայ ինքը Դուման, որպէսզի այնուհետև կարելի լինի նրա միջոցով իրագործել թէ հին և թէ նոր մշակելիք ծրագիրները։

Ի՞նչ կը լինի երրորդ Պետական Դուման. ահա այն հանելուկը, որ դրված է Ռուսաստանի առաջ։ Արդեօք նա կը բանայ ասպարէզ ներկայացուցչական գործունէութեան համար, թէ կը լինի նոյնպէս կարճատև, ինչպէս նախորդները։ Եւ ինչ է վիճակված պարլամենտական կարգերին Ռուսաստանում։

Ահա հարցեր, որոնք ծանրակշիռ են։

Բայց մի բան պարզ է ամենի համար, որ պէտք է սպառել բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են ամրացնելու և բեգմաւորելու Պետական Դումայի կեանքը և գործունէութիւնը։

Հէնց որ Պետական Դուման սկսեց կանոնաւոր գործել, կեանք կը ստանան բոլոր այն ծրագիրները, որոնք պէտք է իրագործվէին իրականութեան մէջ Պետական Դումայի միջոցով։

Քաղաքական համախմբումների և կուսակցութիւնների մինչև այժմ ունեցած գործունէութիւնը ստեղծել է մի շարք տրամադրութիւններ, որոնցով համակված մարդիկ գնում են դէպի ընտրական քուէտուփերը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէհրան, 26 սեպտեմբերի։ Մէջլիսը վերջացրեց ձայների մեծամասնութեամբ ընդունված հիմնական օրէնքների քննութիւնը։

Պետերբուրգի նախկին դեսպան Մուշիր-ուլ-Մուլքը ժամանեց և ներկայացաւ Շահին։ («Հ. Գ.»)

—

Թավրիզ, 26 սեպտեմբերի։ Շահի շնորհած հիմնական օրէնքների լուրը ցնծութիւն պատճառեց ժողովրդին։ Շուկաները հրավառութեան մէջ են։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 26 սեպտեմբերի։ Պարսից դեսպանութիւնը յայտնում է, որ դեռ չեն ստացվել հաստատ լուրեր, թէ թիւրքաց զօրքերը գրաւել են Պարսկաստանի երեք վիճակները և քաղաքները։ («Բիւրօի թղթ.»)

—

Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ ստացված տեղեկութիւնները՝ Ճապօնիայի և Ամերիկայի զինուորական-ծովային պատրաստութիւնների մասին՝ ցոյց են տալիս, որ մօտիկ ապագայում այդ երկու պետութիւնների միջև կարող է ընդհարում տեղի ունենալ։

Ս.-Ֆրանցիսկօյում պատահած միջադէպը, գործադուլարարների կատարած անկարգութիւնները ճապօնական պանդօկում և Բերկելէյում փողոցային տղաների միջոցով ջերմանոցի ապակիների ջարդելը վաղուց արդէն մոռացվել են, և այդ անախորժութիւնները հարթված են դիպլօմատիական ճանապարհով։ Բայց դրանից յետոյ Հ. Ամերիկայում եկան այն համոզմունքին, որ եթէ անմիջապէս միջոցներ ձեռք չառնվեն Ճապօնիայի դէմ, այն ժամանակ Ասիայում ամերիկական առևտուրին, նոյնպէս և Ֆիլիպպեան կղզիների տիրապետութեանը մահացու հարուած կը հասնի։ 17 առաջնակարգ [illegible] անհապաղ օգնական նաւատորմով գնում են դէպի Ասիայի ափերը Միացեալ-Նահանգների շահերը պաշտպանելու համար։ Ճապօնիան նրանց դէմ կարող է ուղարկել համապատասխան չափի և սպառազինութեան 9 նաւեր միայն։ («Ս. Ռ.»)

—

Ներկայումս ռուս ժողովրդի միութիւնը բանակցութիւն է վարում Ցարսկօյէ Սելօյում հայրենասիրական պատգամաւորութեանը ընդունելու մասին։ Միութիւնը իր դիմումի մէջ յիշում է ինչ-որ կարևոր քայլերի նախապատրաստութեան մասին, որոնք կապ ունեն առաջիկայ անցքերի հետ։ Իսկ թէ ինչ քայլերի մասին միութիւնը պիտի զեկուցանէ, առայժմ այդ յայտնի չէ։ Մեծ ազդեցութիւն անելու նպատակով՝ դաշնակցականները իրանց պատգամաւորութեան մէջ մտցնում են և հայր Իոանն Կրոնշտադսկուն, որի համար վերջինս իր համաձայնութիւնն է յայտնել։ («Тов.»)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Այսօր, սեպտեմբերի 27-ին, Թիֆլիսում կատարվելու են 3-րդ Պետական Դումայի պատուիրակների ընտրութիւնները հետևեալ եղանակով՝

I մասի, այն է՝ 1, 2 և 10 քաղաքամասերի ընտրութիւնները ժողովրդական համալսարանի դահլիճում (Զուբալովների տանը), բժիշկ Դ. Ա. Գեղեվանովի նախագահութեամբ։

II մասի, այն է՝ 3, 4, 5 և 9 քաղաքամասերի ընտրութիւնները քաղաքային դումայի դահլիճում, Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Վ. Չերքեզովի նախագահութեամբ։

III մասի, այն է՝ 6, 7 և 8 քաղաքամասերի ընտրութիւնները Հավլաբարում, Վարշամեանի թատրոնում, պ. Գ. Զ. Թամամշեանի նախագահութեամբ։

Առաջին մասը ընտրելու է 2 պատուիրակ, երկրորդ և երրորդ մասերը 3-ական, իսկ ռուսները 11։

Թիֆլիսի I ընտրողական բաժնում առաջադիմական ընտրողների խմբակը առաջարկում է հետևեալ անձերին իբրև պատուիրակների. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին (Ալէքսանդրօվսկի փող. ս. տ.) և Գաւրիլ Բէժ. Սակվարելիձէին, մասնաւոր հա[illegible] № 27)։ Այս առաջին բաժնում մտնում են 1, 2 և 10 քաղաքամասերը, Բօրչալուի գաւառը և Շուլավերը։

II բաժնում (3, 4, 5 և 9 քաղաքամասեր)—Լևոն Եսկ. Մղերովին, նոտար (Երևանեան հրապ.), Միք. Իվ. Թամամշեվին, իրաւունքների կանդիդատ (Բէլուտօվսկի փ.), և Գ. Մ. Թումանովին, ձայնաւոր (Պասկևիչյա փ. № 6)։

III բաժնում (6, 7, և 8 քաղաքամասեր և Թիֆլիսի գաւառ)—բժ. Իգիթեանին (Պախէտինսկի հրապ.), Գաբր. Զաք. Թամամշեվին, ձայնաւոր (Վօզնէսենսկի փող. տ. № 1), և Սերգէյ Բօգդանովիչ Խալաթեանին, բժիշկ (Պետրոս Մեծի փողոց)։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԻԹՈՎ

Արձագանք տալով «Մշակի» հրաւէրին՝ քննութեան ենթարկելու հացի մատակարարութեան խնդիրը, շտապում եմ ույժերս ներածին չափ ներկայացնել իմ խորհրդածութիւնները այդ խնդրի առիթով։

—

Հունձն էլ վերջացաւ, կալերն էլ կալսեցին, ցորենը ամբարեցին, բայց և այնպէս հացահատիկների գները ոչ միայն չեն ընկնում, այլ և բարձրանում են։ Հացի թանկութեան մասին տրտունջներ են լսվում արդէն Կովկասի զանազան անկիւններից. գանգատվում է և՛ գիւղացին, և՛ քաղաքացին։ Սակայն շուկան շարունակում է բարձրացնել գները, հացավաճառները՝ թանկացնել հացը։

Վերջին օրերս մամուլը արձանագրեց մի շարք ուշադրաւ փաստեր այդ խնդրի մասին։ Բագուի քաղաքային ինքնավարութիւնը, հացավաճառների գործադուլի առաջն առնելու համար, հարկադրված եղաւ հացի գինը աւելացնել։

Թիֆլիսի հացավաճառները նոյնպէս դիմումներ են արել այդ նպատակով։

Նոյն տրամադրութիւնը նկատվում է և միւս քաղաքներում։

Կարսում հացավաճառների այդ քայլը քիչ մնաց ժողովրդական անկարգութիւնների ու դժբաղդութեան պատճառ դառնար։

Դժգոհութիւն է նկատվում Գանձակում ևս։

Այդպիսով մենք տեսնում ենք, որ հացի թանգութիւնը ընդհանուր բնաւորութիւն ունեցող մի երևոյթ է դառնում մեր երկրի համար, և նա, անշուշտ, աւելի սոսկալի է դարձնում աղէտալի տարիների թողած անմխիթարական պատկերը։

Ժողովրդական կարիքներն ու ցաւերը «Մշակի» մշտական հոգատարութեան առարկայ են եղել. նա շատ անգամ է բարձրացրել հացի մատակարարութեան խնդիրը և այս անգամ էլ այդ միևնոյն կենսական անյետաձգելի հարցը դնում է ժողովրդի առաջ։

Անուշադիր թողնել նրան և՛ անկարելի է, և՛ յանցանք։

Որքան էլ անբաւարար լինէր ներկայ տարվայ հացահատիկների բերքը, մենք գիտենք, սակայն, որ նա առատ է անցեալ տարիների համեմատութեամբ։ Մինչդեռ նրա գները բարձրանում են այժմ և այն էլ այնպիսի տեղերում, ուր պակասութիւն չէ նկատվում։

Իրաւ է, այդ բանում որոշ դեր են խաղում տեղական առևտրականները, սակայն միամտութիւն կը լինէր կարծել, որ ներկայ թանգութեան երևոյթը միայն տեղական բնաւորութիւն ունի։

Առևտրի շուկաները օղակի նման սերտ կերպով շաղկապված են իրար հետ և անշուշտ մեր տեղական շուկաներն էլ արձագանք են տալիս մեծ շուկաներին՝ թանգացնելով գները։

Եթէ թանգութեան պատճառը լինէին տեղական հանգամանքները, տեղական առևտրականները, ապա ուրեմն ցորենի ու ալիւրի իւրաքանչիւր ներմուծումը պէտք է իջեցնէր գները տեղական շուկաներում, մինչդեռ այդպիսի երևոյթ չէ նկատվում։

Մօտ օրերս Ռօստովից անհագին քանակութեամբ ալիւր ուղարկվեց դէպի Կովկաս։ «Южн. Край» լրագրի ասելով, «Ռուսական ընկերութեան» «Бештау» շոգենաւը բերել է 70,000 պուդ ալիւր, «Эльбрусъ»-ը՝ 45,000 պուդ, «Казбекъ»-ը՝ 50,000 պուդ և այլն։

Մինչդեռ մենք տեսնում ենք, որ դա ոչ մի ներգործութիւն չունեցաւ շուկայի գների վրա, և նրանք շարունակում են բարձրանալ կամ մնալ անփոփոխ։

Մեր ասածը աւելի հասկանալի կը դառնայ, եթէ մեր հայեացքը ուղղենք դէպի մեծ, համաշխարհային շուկաները։ Այդ նպատակով կարևոր եմ համարում ծանօթացնել մեր ընթերցողներին այն տեղեկութիւնների հետ, որ տպագրված է «Вѣстн. Финансовъ» թերթի մէջ հացահատիկների համաշխարհային բերքի մասին։ «Ունգարական երկրագործական մինիստրութեան տուած տեղեկութիւններից երևում է, որ 1907—1908 թւականի շրջանում գլխաւոր հինգ հացահատիկների (ցորենի, հաճարի, գարու, վարսակի և սիմինդրի) համաշխարհային բերքը այս տարի համարվում է 3076 միլ. ցենտն., այսինքն 174 միլիոն ցենտն. պակաս անցած տարվանից։ Պակաս է եղել գլխաւորապէս սիմինդրի բերքը (անցած 1906 թւականից պակասել է 114 միլիոնով) և ցորենի բերքը (պակասել է 78 միլիոնով)։ Յիշեալ հինգ հացահատիկների համաշխարհային պաշարը այս տարի եղել է 74 միլիոն ցենտն., որը 1907 թւի բերքի հետ միասին կազմում է 3151 միլիոն ցենտն.։ Այդ գումարը մօտաւորապէս հաւասար է իւրաքանչիւր տարվայ համաշխարհային գործածութեան գումարին, որ կազմում է 3146 միլիոն ցենտն.։

«Համաշխարհային արդիւնաբերութեան պակասելը, ունգարական այդ տեղեկագրի համաձայն, բացատրվում է նախ նրանով, որ ցանքսատեղերը պակասել են, բայց գլխաւորապէս այն պատճառով, որ բերքը այս տարի աւելի է պակաս, քան անցած տարի։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում այս տարի անաջող է եղել բերքը։ Կանադայում հացահատիկների բերքի պակասելը համարվում է 10—35%։

Օստ-Ինդիայում, չը նայելով որ ցորենի ցանքսերը այս տարի աւելացել են 1 և կէս միլ. հեկտարով, այնուամենայնիւ 1906 թըւականից պակաս բերք է սպասվում։

Արգենտինի հասարակապետութեան մէջ չը նայելով ցորենի ցանքսերը այս տարի աւելացված են եղել, բայց և այնպէս վատ եղանակների պատճառով ցանքսերի մի մասը փչացել է և բերքը ստացվել է նոյնը, ինչ 1906 թւականին։

Աւստրալիայում բերքը, գոնէ ցորենինը, պակասել է անցած տարվայ համեմատութեամբ։

Այդպիսով եւրոպական շուկային հաց մատակարարող գլխաւոր երկիրներում, որոնց թւին անկասկած պատկանում է և Ռուսաստանը, հացահատիկների բերքը նկատվում է այժմ աւելի պակաս, քան անցած 1906 թւականն էր։ Աւելորդ է յոյս դնել եւրոպական աէրութիւնների վրա ևս։ Անգլիայում և Իրլանդիայում ներկայ տարվայ բերքը միջակից պակաս է։ Գերմանիայում հունձը այնքան էլ բաւարար չէր։ Աւստրիայի մի քանի տեղերում՝ Գալիցիայում, Բուքովինայում ցանքսերը բոլորովին փչացան։ Ունգարիայում աշնանացանքսերի 25—60%-ը կրկնավարի են ենթարկել։ Ֆրանսիայում բերքը եղել է բաւարար, բայց հացի տեսակը այնքան էլ լաւ չէ համարվում։ Եւ միայն Իտալիայում անցած տարվանից բարձր է այս տարվայ բերքը»։

Ձեռքի տակ ունենալով վերոյիշեալ տեղեկութիւնները՝ մենք կը տեսնենք, որ հացահատիկների ներկայ թանգութիւնը մեր երկրի շուկաներում որոշ չափով կապ ունի համաշխարհային շուկայի հետ։ Եւ ի հարկէ հացի առևտուրով պարապողները մեզանում աշխատում են օգուտ քաղել դրանից և աւելի մեծ վաստակ վերցնելու յուսով՝ իրանց պահեստներում ամբարել հացի պաշար։

Տուժողը, պարզ բան է, պէտք է լինեն սպառողները, բայց աւելի ևս գիւղական ազգաբնակութիւնը, որ իր անհրաժեշտ կարիքները հոգալու ու հարկերը վճարելու համար ստիպված պիտի լինի հէնց աշնանից էժան գներով վաճառելու իր ունեցած պաշարը։ Իսկ գարնանը նա ստիպված կը լինի աւելի թանգ գներով նորից առնել շուկայից։

Մենք արդէն գիտենք, թէ ինչ ծանր օրեր քաշեցին մեր գիւղացիները այս երեք տարիները։ «Մշակը» տուեց և մի շարք փաստական տեղեկութիւններ մեր երկրի անմխիթարական բերքի մասին։

Այժմ մնում է, որ հասարակութիւնը ինքը հոգ տանի գալիք օրերի մասին և ապահովի հացի մատակարարութեան խնդիրը։ Անհրաժեշտ է, որ գիւղական զանազան կենտրոններում անյապաղ հիմնվեն հացի շտեմարաններ։ Ամեն մի փոքր ի շատէ խոշոր համայնք պէտք է որոշէ իր գործածութեան պահանջը, որոշէ իր ունեցած պաշարը և շտապէ լրացնել իր տարեկան պահանջը թէ ուտելիքի և թէ սերմացուի, որից յետոյ միայն թոյլ տայ արտահանելու աւելորդը։

Բայց որպէսզի գիւղացին կարողանայ և իր պաշարը լրացնել և իր ուրիշ անհրաժեշտ կարիքները հոգալ, հարկաւոր է հիմնել գոնէ ժամանակաւոր փոխատու գանձարաններ, որպէսզի ամենազօր վաշխառուները ասպարէզ չունենան գործելու։

Այդ է միակ ելքը։

Աշխատակից

Բագու։ Չը նայած ընդարձակ տեղեկութիւններին, նահանգի ազգաբնակութիւնը շատ անկենդան է վերաբերվում ընտրութիւններին։

—

Գանձակ։ Ռուսաց կուրիայի կողմից իբրև պատուիրակ ընտրվեց տեղական կլասիքական գիմնազիայի ուսուցիչ Կոլիադին—առաջադիմական։

Գանձակի գաւառի շրջանների լիազօրների համագումարին պատուիրակներ ընտրվեցին երկու անկուսակցական մահմեդականներ։

—

Քութայիսում սեպտ. 22-ին հողատէրերի կողմից պատուիրակներ ընտրվեցին Դ. Օ. Նիժարաձէ, Վ. Ս. Միկելաձէ, Վ. Չիջշավաձէ, Տ. Երիստով. գիւղացիների կողմից՝ Իլիա Կոբէլաշվիլի և Պեօտր Նաբէշվիլի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ*)

III

Վերջին տարիների Ռուսաստանի մեծ յեղափոխական շարժումը հեղեղեց նոր հովերով մեր կեանքի բոլոր ծալքերը այն աստիճան, որ ստիպած ենք մեր կեանքի բոլոր արժէքները նորից վերագնահատել։

Տասնեակ տարիներ—համարեա թէ մի դար—մեր մտքի առաջնորդները քարոզել՝ ստիպել են այն եղանակով մտածել, որ իբր թէ հասարակութեան առաջնակարգ պարտականութիւններից մէկն է օժանդակել ուսանողներին բարձրագոյն կրթութիւն ստանալու, և այդ քարոզների հետևանքը այն է եղել, որ այսօր մեր հասարակական հիմնարկութիւնները և անհատներ տարեկան աւելի քան 100,000 րուբլի ծախսում են այդ նպատակի համար։

Այժմ տեսնենք, թէ որքան նպատակայարմար է հասարակական այդքան խոշոր գումարների նմանօրինակ ծախսելը։

Ռուսաստանի յեղափոխական շարժումը մի փառաւոր հարցաքննութիւն էր կայսրութեան մէջ ապրող ազգութիւնների համար, և ամենքը հնարաւորութիւն ունեն ապացուցանելու, թէ որքան այս կամ այն համայնքը կամ ազգութիւնը հասունացած է։

Մինչդեռ 1905 թ. Ռուսաստանի բոլոր անկիւնները սրտատրոփ ապրում էին այն ժամանակվայ յեղափոխական կեանքով, մինչդեռ մեր հարևան Վրաստանը ծայրէ ի ծայր քաղաքական շնչով էր շնչում, մինչդեռ նրանց գիւղերում միտինգներ էին կազմվում, մեզ մօտ հայկական կենտրոններում անգամ՝ հասարակութեան լայն խաւերը քնած էին լետարգիական քնով. մերոնք նոյն իսկ անտեղեակ էին, թէ ինչեր [illegible] կատարվում են Ռուսաստանում. կարծես թէ մենք այդ ժամանակ լուսնի վրա էինք ապրում։

Եւ ինչի՞ց էր այս կատարեալ անտարբերութիւնը—խորը տգիտութիւնից. մեր մասսան խաւար էր, մենք չէինք մտածել ժողովրդի մասին, նրան չէինք պատրաստել, նա կատարելապէս անտեղեակ էր սօցիալական-անտեսական գիտութեան տարրական սկզբունքներին, քաղաքական կեանքին և այլն։

Եւ ո՞վ էլ պէտք էր նրան պատրաստէր. մենք սովորել էինք տասնեակ տարիների ընթացքում առանց առաջնորդողների գործ չը կատարել, ժողովրդի մէջ չէինք զարգացրել նախաձեռնութեան ոգին և ամենքս երկնային մանանան սպասում էինք մեր լուսաւորվածներից, կրթվածներից, իսկ նրանք յամառութեամբ չէին երևում բուն ժողովրդի մէջ. հասարակութեան փողով ստացվածները երևելի կարրիէրիստներ էին դուրս գալիս համարեա առանց բացառութեան։

Մենք փողերը ծախսելով որոշ թւի անհատների վրա՝ նրանցից պատրաստել էինք լաւ կարրիէրիստներ, իսկ մեր հարևան վրացիք այդ ժամանակ իրանց երկիրը ծածկեցին դպրոցներով, գրադարաններով և գիւղը հեղեղեցին գրքերով. նրանք իրանց սակաւ միջոցները գործադրեցին մասսան կրթելու, նրա ընդհանուր մտաւոր մակերևոյթը բարձրացնելու համար, և ահաւասիկ այսօր մեր և նրանց գործունէութեան պտուղները աչքի առաջ են. որքան որ մենք հարուստ և ուժեղ ենք կարրիէրիստ ինտելիգենտներով, այնքան նրանք ուժեղ են ժողովրդական գիտակից մասսայով։

Անցեալ անգամները լրագիրներում հաղորդված էր, որ Բագւում վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ գրագիտութեան մէջ հայ բանւորը ամենայետին տեղն է բռնում, նոյն իսկ Թուրքերից ցածր է կանգնած։

Մեր իրականութեան այդ փոքրիկ անալիզի հետ չը պէտք է մոռանալ նաև մի հանգամանք. ապա ինչպէ՞ս են բարձրագոյն կրթութեան հասնում օտարները։

Դրանց մասին ահա թէ ինչեր ենք յաճախ գրում, կամ լսել ենք. Ամերիկայում ուսանողն իր ապրուստը ճարելու համար չի ամաչում փողոցներում անցորդների կօշիկները մաքրել. Հօլանդիայում և Բելգիայում ուսանողները ամառ ժամանակ չեն քաշվում հասարակ մշակի գնով գիւղերում աշխատելու, քաղհանք և այլ դաշտային աշխատանքներ կատարելու. այսպիսով միաժամանակ և՛ իրանց աշխատանքով ապրում են, և՛ ժողովրդի կեանքին ծանօթանում, և՛ գիւղացուն բաժին հանում իրանց ունեցած գիտական պաշարից։

Վերջացնելով մեր նկատողութիւնները, կարծում ենք, որ ժամանակ է հասարակական հիմնարկութիւններում ուժգին կերպով արծարծելու մասսայի մասին հոգալու գործելակերպը, թողնել ստիպենդիաներ հիմնելու անօգուտ գաղափարը, այլ այդ ահագին գումարները ծախսել գիւղերում և աւաններում տարրական դպրոցներ հիմնելու, գրադարաններ, ընթերցարաններ բացելու, հանրամատչելի գրքեր և ժողովրդական էժան լրագիրներ հրատարակելու։

Արժէր որ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը մտածէր այս մասին և ունեցած ահագին եկամուտը աւելի շահաւէտ գործ ածէր։

Տիրին

---

*) Խմբագրութիւնը անհրաժեշտ է համարում նկատել, որ ներկայ յօդուածի մէջ շօշափված հարցի առիթով նա իրան իրաւունք է վերապահում յայտնելու իր սեփական կարծիքը։ Խմբ.

ԹՈՒՐՔ ԿԵԱՆՔԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

III

Նախանցեալ յօդուածով ասացինք, թէ ինչ փրկարար դեր է խաղում «Մօլլա-Նասրէդդինը» Թուրք հասարակութեան մէջ։ Որպէսզի մի գաղափար տանք մեր յարգելի պաշտօնակցի ուղղութեան և կատարած գործի մասին, դնում ենք այստեղ նրա մի քանի նկարների բացատրութիւնն ու իմաստը։

«Մօլլա-Նասրէդդինը», ինչ ասել կուզէ, անհաշտ ատելութեամբ լցված է դէպի օսմանեան բռնակալութիւնը։ Նա տեսնում է, որ մի ժամանակվայ ահագին, հզօր Թիւրքիայից մնացել է մի հիւանդ, հիւծված մարդ, որը ամեն օր կորցնում է իր փտած անդամներից մէկը։ Նա Թիւրքիայի այդ ողբալի դրութիւնը խտացնում է մի պատկերի մէջ, որը աւելի պերճախօս է, քան տասնեակ հատորներ։

Ահա ձեր առաջ մի հսկայ ծառ («Մօլլա-Նասրէդդին», № 11)։ Դա Թիւրք կայսրութիւնն է, Աբդիւլ-Համիդի գահակալութեան օրով։ Ծառը մի թարմ, զալար ճիւղ անգամ չունի, որովհետև նրա բնում որդերը վխտում են, արշաւելով ամեն ուղղութեամբ։ Կարդում էք որդերի անունները՝ Շէյխ Աբուլ Հուդա, Աբդիւլ-Համիդի փէսէն, որի ազդեցութեան տակ է գտնվում կարմիր վեհապետը. Ֆէհիմ փաշա, լրտեսապետը, Շէյխ Զաֆէր, Շէյխ-իւլ-Իսլամ, Մուխթար փաշա, և այլն։ Ծառը ցցում է մի քանի չորացած ճիւղեր. Ռումիլի, Արաբիա, Անատոլիա։ Ռումիլիից կտրված են Բուլղարիան, Սերբիան, Բոսնա-Հէրցէկը։ Արաբական ճիւղից՝ Եգիպտոսը. իսկ ամբողջ ճիւղը՝ մէջտեղից ճարած՝ մօտ է [illegible] ճիւղից կտրված են Արդահանը, Կարսը։

Անատոլիայի այդ ճիւղը վտանգից ազատ չէ սակայն. Գերմանիան՝ նրա տակ կանգնած՝ մի խոշոր սղոցով կտրատում է արմատից. պարզ երևում է, որ Վիլհէլմը բաւական արդիւնաւոր կերպով առաջ է տարել իր գործը։ Իսկ Աբդիւլ-Համիդը, այդ ճիւղի վրա օրօրան սարքած, օրօրվում է և հեշտացնում Գերմանիայի աշխատանքը։

Միւս պետութիւններից Աւստրիան ու Ֆրանսիան մագլցում են դէպի ծառի կատարները։ Անգլիան, հեռու, ծովի վրա սպասում է, իր մարտանաւերի կայմերը աչարակած, որոնելով, երևի, միջամտութեան յարմար բոպէն։

Պատկերի ներքև, մի անկիւնում, գրված է՝

Սուս!!! սուլթանի մասին չէ կարելի խօսել։

(Հայրենասէրներ)

Այդ հիւանդ մարդը, որ գայլի նման անգութ է, հզօրների առաջ, ինչպէս են եւրոպական վեց մեծ պետութիւնները, սէքում, փոքրանում է և նրանց ամեն մի պահանջին միայն մի պատասխան ունի՝

Գլխի վրա (Բաշ-իւստէ) («Մօլլա-Նասրէդդին», № 33).

Իսկ, իրանից թոյլերի առաջ, ինչպէս, օրինակ, Պարսկաստանը, փքվել է, դարձել մի իսկական գայլ և ցոյց է տալիս նրան իր ժանիքները («Մօլլա-Նասրէդդին», № 33)։

Բայց եթէ Թիւրքիան կործանվում է, այդ նրա համար է, որ երկրում ազատութեան նշոյլն անգամ չը կայ. այդ նրա համար է, որ Աբդիւլ-Համիդը խեղդել է իր գահակալութեան առաջին տարիներում հռչակած սահմանադրութիւնը, թէկուզ նա լինէր կիսատ-պռատ, բիւրոկրատական։

Եւ կարմիր սուլթանը, Թիւրքիայի դահիճը, չէ կարողանում հանդուրժել ազատութեան, ո՛չ միայն իր երկրի սահմաններում, այլ և հարևան Պարսկաստանում։

Այսպէս՝ № 35-ում մի պատկեր ներկայացնում է Պարսկաստանի պառլամենտը. Բահարիստանի՝ Մէջլիսի շէնքի՝ ճակատին մի կարմիր դրօշակի վրա փողփողում է՝ «Եաշասուն Մէշրուտէ» (կեցցէ սահմանադրութիւնը)։ Շէնքի վրա յարձակվում են սահմանադրութեան թշնամիները. մի կողմից խաներն ու Իրանի սև հարիւրեակային մեծամեծները, միւս կողմից հոգևորականները։ Իսկ շէնքի դիմաց, սուլթան Համիդը՝ զառամած, կքած, լարել է իր աղեղը ու նետ է արձակում Մէջլիսի վրա։

Այս մի քանի պատկերները ամբողջացնում են Թիւրքիայի դիմագիծը։ Մի կայսրութիւն, որ ազատութիւնը խելագարօրէն ատող վեհապետի ձեռքով, նրա միահեծան, սանձարձակ բռնակալութեան պատճառով, աւերվում է ու կործանվում։

Այս է «Մօլլա-Նասրէդդին» դիրքը դէպի օսմանեան բռնակալութիւնը։

Յաջորդ անգամ կը տեսնենք, թէ ինչ տեսակ պայքարներ է մղում և որոնց դէմ։

Տ. Զ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

◆ Ինչպէս յայտնի է, սօց.-յեղափոխականները բօյկոտ են յայտարարել երրորդ Պետական Դումայի ընտրութիւնների դէմ։ Այժմ, «Ут. Рос.» լրագրի ասելով, յիշեալ կուսակցութեան պատկանող գիւղացիներն ու բանւորները այդ որոշման հակառակ կուսակցական թեկնածուներին ընտրում են պատուիրակներ։ Այդ հանգամանքը բաւականին անհանգստութիւն է պատճառում կենտրոնական կոմիտէին, և նա վճռել է Վ. Մ. Չերնովի միջոցով առաջարկել՝ որոշումների հակառակ գործողներին արտաքսել կուսակցութիւնից։ Տեղեր էլ կան, ինչպէս օրինակ Կալիշի նահանգի 63 համայնքները, որոնք սեփական որոշմամբ հրաժարվում են պատուիրակների ընտրութիւնից։

◆ «Բունդ»-ի կենտրոնական կոմիտէտը մօտ օրերս մի թռուցիկ է բաց թողել, որով հրաւիրում է հրէաներին եռանդուն կերպով մասնակցել ընտրութիւններին։

(«Т.»)

◆ Վօրօնեժում երկաթուղային բանւորների ընտրութիւնների ժամանակ, դէպօյում, հետևեալ ծիծաղաշարժ դէպքն է տեղի ունեցել։ Բանւորները բօյկոտ են անում և չեն ուզում ընտրութիւն կատարել, բայց երկաթուղային վարչութիւնը կարողանում է հրաւիրել մի քանի հոգի, որոնք և ընտրում են 2 սև-հարիւրեակայիններ։ Ընտրվածներից մէկը՝ սլեսար Դուշինը այնպէս է վախենում իր ընտրութիւնից, որ սկսում է խնդրել իր ընկերներին ազատել իրան, խնայել կնոջը և երեխաներին։ Բայց նրա աղաչանքները անօգուտ անցան։ Այն ժամանակ Դուշինը վճռականապէս հրաժարվեց։ («Рѣчь»)

◆ Բարձր շրջաններում երկրորդ Պետական Դումայի նախագահ Ֆ. Ա. Գօլովինի թեկնածութիւնը Մոսկվայից՝ անդամութեան կամ նոյն իսկ նրա նախագահի պաշտօնի համար՝ բարեհաճ կերպով է ընդունվում։ Այն համակրանքը, որ վայելում է Գօլովինը պալատում, բաւականին բացատրում է ռուս ժողովրդի դաշնակցութեան ատելութեան բուն պատճառը, որով նա ուզում է զրկել օպպօզիցիային իր ականաւոր և [illegible] ներկայացուցչից։ Ներքին գործերի մինիստրութիւնը իր կողմից միջոցներ է ձեռք առել գտնելու Գօլովինի կեանքի դէմ դաւադրութիւն կազմողներին ու նրանց խրախուսողներին։ Այս [illegible] նա լիակատար աջակցութիւն ցոյց կը տայ ֆինլանդական իշխանութեանը, որը ներկայումս աշխատում է պարզել այդ դաւադրութիւնը և գտնել չարագործներին։ («Ут. Рос.»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Գանձակ, սեպտեմբերի 21-ին

Սեպտեմբերի 18-ին նահանգական դատարանում նշանակված էր Շուշի քաղաքի երեք քահանաների և չորս ժամկոչների գործի քննութիւնը, որոնք մի տարուց աւել է, որ քաշել են աքսոր, նստած էին բանտում, ապա վերջերս էտապով նրանց բերել էին նահանգական բանտը։ Ըստ մեղադրական ակտի գործը եղել է հետևեալ հանգամանքների մէջ։

1906 թ. սեպտեմբերի 21-ին Շուշու ոստիկանապետ Սմօրօդսկու կարգադրութեամբ Թուրք օֆիցեր Սալիմօվ, զինւորների և պրիստաւի օգնական Գասպարեանի հետ, խուզարկում է Շուշի քաղաքի Ագուլեաց եկեղեցին։ Խուզարկութիւնը երևան է հանում 23 հատ ռումբ, 2 խենչալ և մէկ հրացան, որոնք զետեղված են լինում եկեղեցու փոքր սեղաններից մէկի տակում։ Ապա գէներալ Բաուէրի կարգադրութեամբ ձերբակալվում ու բանտ են նստում նոյն եկեղեցու քահանաներ՝ Գարեգին Յովհաննիսեանց, Կարապետ Վարդապետեանց, Արսէն Հախումեանց և չորս ժամկոչներ, տալով գործը դատաստանական իշխանութեան։ Դատաստանական իշխանութիւնը քննելով գործը՝ պատասխանատուութեան է ենթարկում յիշեալ քահանաներին և ժամկոչներին, որպէս եկեղեցու մէջ պայթուցիկ նիւթեր (взрывчатыя вещества) պահողների, մեղադրելով 208, 1260 և 1271 յօդուածներով։

Նահանգական քննութեան ժամանակ քահանաները այդ գործի մէջ իրանց մեղաւոր չը ճանաչելով՝ բացատրել են, որ Ագուլեաց եկեղեցին գտնվելով հայոց և Թուրքաց մասի սահմանում՝ 1905 թւի օգոստոսեան արիւնոտ օրերին այդ եկեղեցին Թուրքերի կողմից ենթարկվել է կողոպտման ու սրբապղծման, և որ այդ օրվանից սկսած շուրջ տարի ու կէս հայերի ու Թուրքերի միջև շարունակվում էին լարված ու թշնամական յարաբերութիւնները, իրանք հազիւ այդքան ժամանակամիջոցում յիշեալ եկեղեցում մի երկու անգամ ժամասացութիւն կամ ծէս կատարած լինեն՝ եկեղեցին Թուրքերից մօտ և մի այդպիսի վտանգաւոր տեղ գտնվելու պատճառով։ Այդ ժամանակամիջոցներում եկեղեցին de facto գտնվում էր ինքնապաշտպանութեան խմբակների տրամադրութեան տակ, որպէս մի դիրք՝ Թուրքերի յարձակումները յետ մղելու և եկեղեցին պահպանելու կրկնակի կողոպտումից ու սրբապղծումից։ Իսկ եկեղեցու մաքրութեան մասին հոգողները ժամկոչներն են եղել, որոնք հերթով շաբաթական մէկ անգամ մաքրում էին եկեղեցին։

Ժամկոչներն էլ իրանց մեղաւոր չը ճանաչելով այդ գործի մէջ, բացատրել են, որ թէպէտև իրանք շաբաթը կամ երկու շաբաթը մէկ անգամ հերթով մաքրել են եկեղեցին և եկեղեցու բանալին գտնվում էր հերթապահի մօտ, սակայն՝ եկեղեցին հայ-թուրքական կռիւների ժամանակ լինելով որպէս մի դիրք՝ ամեն ոք այնտեղ մտնում դուրս էր գալիս, իրանք մտնողները բանալով եկեղեցու դուռը, որի բանալին կողպելուց յետոյ կախում էին դրան մօտ՝ պատից։ Ահա այս է ըստ մեղադրական ակտի գործի բովանդակութիւնը։

Դատավարութիւնը տևեց երկու օր։ Մեղադրվողներին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Կլանկը, մեղադրում՝ նահանգական դատարանի դատախազ Ֆրիդէն։ Դատարանում մեղադրվողները պնդեցին իրանց տուած նախնական ցուցմունքների վրա։ Մեղադրվողների կողմից կանչված էին որպէս վկաներ՝ քաղաքագլուխ Քալանթարեանց, Մաթինեանց և մի քանի ուրիշներ, որոնք՝ դատարանում նկարագրելով անդառնալի կերպով անցած սև ու արիւնոտ օրերի մղձաւանջը՝ վկայեցին դրանց անմեղ լինելն ու ասածները։

Մեղադրվողների ու վկաների հարցուփորձից և ապա դատախազի և պաշտպանի երկար թէր և դէմ ճառերից յետոյ դատաւորները քաշվեցին առանձնասենեակ, ուր չորս ժամ խորհրդակցելուց յետոյ դուրս բերին հետևեալ դատավճիռը. քահանաներին և ժամկոչներին մեղաւոր ճանաչելով, դատարանը բոլորին դատապարտեց երեք տարով՝ կալանաւորական բաժանմունքը (арестантское отдѣленіе), զրկելով բոլորին էլ իրաւունքներից։ Դատաւորների այդ որոշման դէմ Կլանկը վճռաբեկ գանգատ ներկայացրեց Թիֆլիսի դատաստանական պալատին։ Միևնոյն ժամանակ դատարանը որոշեց մեղապարտներին բաց թողնել—քահանաներին՝ իւրաքանչիւրին 5000-ական, իսկ ժամկոչներին՝ 1000-ական ր. գրաւականով (կանխիկ փող), այսինքն եօթը հոգու համար 19,000 րուբլի։

Ա. Աղախանեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 1-ին, կայանալու է հայ դերասանական խմբի երկրորդ ներկայացումը։ Խաղալու են առաջին անգամ հայ բեմի վրա «Վարքի Թեանշան» յայտնի դրաման, հեղինակութիւն Շվայերի, որը ունեցել է ռուսաց և արտասահմանեան բեմերի վրա աջողութիւն։ Մասնակցելու է ամբողջ դերասանական խումբը։ Պիէսայի մէջ շօշափվում են կենսական խնդիրներ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Խանքենդ-աւան, 21 սեպտ.

Անցեալ տարի հայերի համար խպառ փակված էր Շուշի-Եւլախ ճանապարհը։ Հայերը ծանր դժուարութիւնների յաղթելով ճանապարհորդում էին լեռնային զօտիներով դէպի Գանձակ։ Այս դժուարութիւններին յաղթելու համար յղացաւ Շուշի-Գանձակ ճանապարհ անցկացնելու միտքը։

Այդ ճանապարհը երկու նպատակ ունէր. նախ՝ որ հայերը կարող լինեին հանգիստ սրտով և խաղաղ տեղափոխվել Ռուսաստանի քաղաքները, և երկրորդ՝ Ղարաբաղում հացալից գաւառը Ջրաբերդն է, կարողանային այդտեղից սայլերով հաց տեղափոխել թէ Խաչէնի գիւղերի և թէ Շուշի քաղաքի համար։

Գիւղացիները ուրախ սրտով գործի կըպան. նրանց համար վաղուց էր ցանկալի այդ ճանապարհը, և մեծ եռանդով աշխատելու դուրս եկան. բայց ցաւալին այն էր, որ կառավարութեան պաշտօնեաները արգելքներ յարուցին և փակեցին աշխատանքը և մինչև անգամ մի քանի տեղերի մըշակներին ձերբակալեցին և բանտ նստացրին։ Այս ցաւալի և ծանր գործողութեան առաջն էլ առնվեց։ Գիւղացիութիւնը բողոք բարձրացրեց, որ ոչ մի յարմարագոյն ճանապարհ չունի յարաբերութեան մէջ մտնելու հարևան գիւղերի հետ մթերքներ փոխադրելու, և կառավարութիւնը լսելով Խաչէնի արդար ձայնը՝ իրաւունք տուեց Խանքենդից ճանապարհ անցկացնել դէպի Ջրաբերդ և դէպի Գանձակ։ Նպաստամատոյց յանձնաժողովի կողմից վարձվեցին երկու ինժեներներ, որ չափել են ճանապարհը, նկարել նրա գիծը, ապա ներկայացնելով Գանձակի նահանգապետին՝ ստացել են շինութեան թոյլտուութիւնը։

Այժմ արդէն գիւղացիութիւնը աշխատում է Ջիվանշիրի և Շուշու գաւառների սահմանագծում — Ցեխ-Ձորում։ Այնտեղ յանձնաժողովի կողմից նշանակված է հսկող անձ, շինված է յատուկ փուռ, ուր մշակների համար թխվում է հարկաւոր հացը։ Շուտով կաւարտվի Ցեխ-Ձորի կեռմանոր ճանապարհը, ապա կը սկսվի Խաչէն գաւառի, յետոյ Ղուբարթուի ձորի։ Ճանապարհի ամենադժուար տեղերը Ցեխ-Ձորն և Ղուբարթուն. մնացած տեղերում աշխատանք քիչ կը գործադրվի։

Պէտք է նկատել, որ ճանապարհի վրա աշխատում են սակաւ մարդիկ. եթէ այդ վար ու ցանքսը չը խափանելու համար է, բարի է. սակայն վար ու ցանքսից առաջ էլ աշխատանքը շատ դանդաղ էր գնում։ Անցեալ տարի գիւղացիութիւնը պարտաւորված էր իր սահմանագիծը շինել-աւարտել, և գործն արագ էր ընթանում, բայց խանգարվեց։ Վար ու ցանքսից յետոյ բարւոք կը լինէր, որ անցեալ տարվայ ձևով գործն սկսվէր, ամեն մի գիւղ շինէր իր սահմանները. եթէ տարածութիւնը շատ լինի, օգնէին և միւս գիւղացիները. այդպիսով կարելի կը լինէր մինչև վրա հասնող ձմեռը աւարտել ճանապարհը, իսկ գարունքից շինել կամուրջները և այդպիսով Գանձակը կապել Ջրաբերդի, Խաչէնի, Խանքենդի և Շուշու հետ։ Դրանից յետոյ գիւղացիութիւնը կարող է պահել հանրակառքեր, ֆայէտօններ, ֆուրգօններ և սայլեր՝ ապրանքներ և ճանապարհորդներ տեղափոխելու, և նրա համար կը բացվի աշխատանքի մի անսպառ աղբիւր։

**

—

Ջիբրայիլ (Կարեագինի գաւառ)

Մեր գաւառի հայ և Թուրք ժողովուրդը ոչ մի պատրաստութիւն չէ տեսել ընտրութիւններին մասնակցելու համար և վերաբերվում է չափազանց սառնասրտութեամբ, չը գիտակցելով որ լուութեամբ ոչ մի բան չէ կարելի ձեռք բերել։

Չը նայած այս տխուր հանգամանքներին, այնուամենայնիւ կարծում եմ, որ մեր ժողովուրդը ձայն կը տայ այնպիսիներին, որոնք, լաւ գիտակցելով ժողովրդի իսկական և անյետաձգելի պահանջները, կը հանդիսանան Դումայում արտայայտիչներ ժողովրդի ծով ցաւերին։ Սրա համար բոպէ առաջ մտածելը, մինչև անգամ, հէնց ընտրութիւնների ժամանակ, կունենայ իր որոշ օգուտը։

Տէր-Յարութիւնեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

I

Սեպտեմբերի 10-ին

Վերջապէս չորս ամսվայ ակամայ դադարումից յետոյ լոյս տեսաւ «Մշակը»։ Թէ որքան զգալի էր «Մշակի» պակասութիւնը հայ ընթերցող հասարակութեան համար, այդ երևում էր նրանից, որ ամենքը բողոքում էին, թէ չը կայ մի լուրջ թերթ, բոլորն էլ կուսակցական հողի վրա են կանգնած, «Մշակն» էլ փակվեց, էլ որտեղ արձագանք է գտնելու ժողովրդի բողոքը, տրտունջը։ «Մշակը» ներկայ իրականութեան մէջ միակ թերթն է, որ լրջութիւնն ու խոհեմութիւնը իրան բնաբան ունի ընտրած։

Թէև այս չորս ամսվայ ընթացքում յիշատակելու արժանի շատ դէպքեր կատարվեցին, բայց մենք կը յիշենք միայն այն դէպքերը, որոնք իրանց այժմէութիւնը չեն կորցրած։

Այս ամառ մեզանում կատարեալ անարխիա էր տիրում։ Ամբողջ գաւառը եայլաղ բարձրանալուց յետոյ՝ շարունակ ենթակայ էր աւազակային խմբերի յարձակմանը. էլ եզներ ու տաւար էր որ քշեցին եայլաղներից։ Սար-սրոտատեղիներում գիւղացու ինչքը, ստացուածքը իրանը չէր։ Եւ այնքան խեղճ է մեր գիւղացին, որ ահագին կարողութիւն առնում սար է բարձրանում, առանց մի որևէ ինքնապաշտպանութեան զէնքի, որովհետև գաւառս զինւորական դրութեան մէջ է հրատարակված։ Այստեղ պէտք է մեղադրել մեր գիւղացիներին, որ նրանք առհասարակ շատ անտարբեր են ու էգօիստ։ Ում եզն ու մալն են տարել՝ միայն նա է քթի տակը փնթփնթում, իսկ մնացածները մատը մատին չեն խփում։ Ամառվայ ընթացքում մօտ 20,000—30,000 ր. չափ եայլաղներում գողութիւն եղաւ։ Գոնէ մի անգամ մեր գիւղացիները չը հաւաքվեցին գաւառապետի մօտ և չը բողոքեցին, թէ այդ տեսակ կացութեան մէջ մնալ անհնարին է. լսված բան է, որ մարդ ինչք, անասուն ունենայ սար, չօլ տեղում և նրանց պաշտպանելու հնարաւորութիւնից զուրկ լինի։ Ուստի դրա համար խնդրում ենք, որ Փոխարքայի առաջ միջնորդութիւն յարուցանէք մեզ՝ եայլաղ բարձրացող գիւղացիներիս զէնք կրելու համար։ Եւ մի առանձին պատգամաւորութիւն էլ ուղարկէին Փոխարքային։ Չէնք կարծում, որ այս իրաւացի պահանջն առանց հետևանքի մնար։ Բայց մեր գիւղացին այնքան անհատական, էգօիստ է, որ մտածում է. «Ի՞նձ ինչ, իմ մալը որ տեղն է, այսքան որ խօսում եմ՝ էդ էլ հերիք է»։

Բայց քանի որ մեր գիւղացին ուրոյն ուրոյն կը գործէ, նա միշտ էլ կը տուժէ, միշտ ենթակայ կը լինի աւազակների էքսպրօպրիացիային։ Միակ ելքը համայնքի ի մի խմբվելն է. միակ զէնքը ինքնապաշտպանութեան համայնքի անդամների ի մի գործելն է։

Որ մեր ժողովուրդը զուրկ է համայնական ոգուց, այդ երևաց այն բանից, որ ցոյց տուին Կարծաղ, Դաղէշ և Սուլդա գիւղերը իրանց երկար տարիների հարևան գիւղացիներին, Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու հողերից օգտվելու գործում։

Ինչպէս յայտնի է, յիշեալ հողերով օգտվում են ոչ միայն այդ երեք անուանեալ գիւղերը, այլև գաւառիս մի քանի գիւղերը։ Բայց յիշեալ գիւղացիք, տարվելով «Երթօբայի» գաղափարով, որ հողը պատկանում է աշխատաւոր ժողովրդին, մոռանալով հանդերձ՝ որ իրանց հարևան գիւղացիներն էլ իրանց պէս հողի կարօտ են, տնտեսապէս նոյնչափ ընկճված աղաներից, որքան իբանք, հասարակական և պետական հարկերով նոյնչափ ծանրաբեռնված, ինչքան այդ կարճատես «էրթօրականները»—մերժեցին իրանց հարևաններին և չը թողին, որ ամառըս սար բարձրանան։ Է՞հ, սակաւահող գիւղացին ի՞նչ կարող է մեզանում առանց հայլաղի եօլա գնալ. դժար էլ է պէտք է բարձրանայ։ Եւ որպիսի տխուր հետևանք։ Վաչեանցիները սար բարձրանալիս ընդհարում են ունենում դաղէշցիների հետ, որտեղ միջամտում են կազակները և հրացանազարկ անում հինգ հոգու, որից չորսը մեռնում են։

Եթէ ընթերցողը յիշում է, այս հարցի մասին գրած ունէի «Մշակում» և շեշտել էի, որ այդ հողերից պէտք է բաժին հանել և նրանց, որոնք տասնեակ տարիներ օգտվել են նրանով։

Բայց մարդիկ անկուշտ են. որ մի քիչ ունենում են, ցանկանում են էլի ունենալ և վերջն էլ աշխարհին տիրել։

Ի՞նչ էք կարծում, ընթերցող, ինչո՞վ վերջանայ այս ագրարական հարցը։ Նրանով, որ գիւղացիք կարմիր արիւնը տեսնելով քթները կախեցին. կառավարութեան միջամտութեամբ էլ ամեն բան առաջվայ կարգին գնաց։ Միայն գիւղական չորս ընտանիքն է, որ ողբում է իր աշխատաւոր ձեռքերը։ Ահա ի՞նչ է նշանակում չը հասկանալ գործի էութիւնը։ Մի հատիկ ագրարական դէպքը գաւառումս, որ գիւղացին զէնք է վերցնում իր շահերը պաշտպանելու ոչ թէ կալուածատէրերի դէմ, այլ իր նման չարքաշ, կեղեքված սակաւահող գիւղացու դէմ։

II

Իսկ ի՞նչ էր անում մեր փոքրիկ քաղաքը։ Էհ, ինչ պիտի անէր։ Մի քիչ զարդարվել էր իր նորեկ ուսանող որդիներով, որոնք եկել էին ամառը անցկացնելու, կազդուրվելու։ Էհ, ի՞նչ ենք պահանջելու. մարդիկ ասում էին թէ «ինն ամիս չարչարվել-տանջվել ենք (հաւատա՞լ թէ՞ ոչ), ուղեղներս յոգնել է երկար պարապելուց, մարմիններս ծանրաբեռնվել մեր ընդունած ուսման պաշարներով (երնեկ ձեր հօրն ու մօրը), այժմս էլ հանգստանալու ենք»։

Քաղաքացիք գանգատվում են, թէ գործ չը կայ, առևտուրը կանգնել է, կատարեալ քնատութիւն է տիրում և չը գիտեն, թէ անգործութիւնից ինչ անեն։ Թէև գործի աշխուժութիւն չը կայ, բայց սազանդարներով քէֆն ու ուրախութիւնը, հարսանիքն ու պատիւը անպակաս են։ Փա՜ռք մեզ։

Պէտք է յիշատակել և այն, որ Ախալքալաքում գոյութիւն ունի «Հայոց Բարեգործական ընկերութիւն», որը ժառանգութիւն է ստացել նախկին հայոց կովկասեան բարեգործական ընկերութեան Ախալքալաքի ճիւղից մօտ 800 րուբլի աշխատանքի տուն հիմնելու համար։ Սա էլ իր ընդհանուր ժողովում 21 ձայնով ընդդէմ 2-ի որոշում է բաց անել «Ջուլհականոց-արհեստանոց», որի դազգահները նոյնպէս ստացել է էլի նոյն ընկերութեան ճիւղից. բայց շնորհիւ վարչութեան անդամների եռանդուն գործունէութեան, թէև տունը վարձված է, մինչև այսօր ընդհանուր ժողովի որոշումը չէ ի կատար ածվել։ Չար լեզուները ասում են, թէ վարչութեան անդամների մէջ տարաձայնութիւն է ծագել և ուզում են փակել արհեստանոցը թելի թանգանալու և վարչութեան անդամների եռանդի բացակայութեան պատճառով։

Վա՜յ պապանձվէին այդ չար լեզուները, որ հանգիստ չեն թողնում Ախալքալաքի հայոց բարեգործական ընկերութիւնը։

Պարոններ, զարթեցէք քնից և օր առաջ ի կատար ածեցէք ընդհանուր ժողովի որոշումը։ Ամօ՞թ է, որ մի գործի ձեռնարկել էք և կիսատ թողնում։

Իսկ ի՞նչ է անում մեր տասներկուամեայ պատանի քաղաքային ինքնավարութիւնը։

Ո՞հ, նա հսկայական քայլերով առաջ է գընում կուլտուրական շաւղով։

Եթէ քաղաքիս սագերը չը գրգռվէին, կը խոստանամ այդ մասին գրել հետևեալ անգամին։

Էն—էն

Յ. Գ.—Արդէն քաղը վերջացել է և կալն է սկսվել։ Գիւղացոց ասելով, ցորենն ու գարին այս տարի լաւ են. երևի սաստիկ պակասութիւն կը զգան գիւղացիք յարդի և խոտի, նրանց չը բուսնելու պատճառով։ Հիմիկվանից արդէն քաղաք են բերում ծախելու իրանց անասունները։ Հացի գինը բարձրացաւ։

Նոյնը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Ի նկատի ունենալով ալիւրի և բանւոր ձեռքի թանգանալը և ուշադրութեան առնելով, որ փռերում ներկայումս թխում են միայն 2-րդ և 3-րդ տեսակի հացեր, Թիֆլիսի քաղ. վարչութիւնը հետևեալ սակագինն է որոշել. 2-րդ տեսակի ֆունտի համար 5 կ., իսկ 3-րդ տեսակի համար $4\frac{1}{2}$ կոպէկ։ Իսկ վրաց փռներում թխվող հացի ֆունտի համար 5 կոպէկ։

✦ Վրաց դրամատիկական ընկերութեան վարչութիւնը վճռել է վրաց ներկայացումների սէզօնը բանալ հանգուցեալ Ի. Գ. Ճավճավաձէի յիշատակին նուիրած երեկոյթով, հոկտեմբերի 12-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում։

✦ Կիրակի օրը, սեպտեմբերի 23-ին, ոստիկանութիւնը գտել է կեղծ 5 րուբլիանոցներ պատրաստելու արհեստանոց։ Այդ արհեստանոցը գտնվելիս է եղել 3-րդ քաղաքամասում, Սօրօրնի միջանցքում, Յովհաննիսեանի ժառանգների տան մէջ, որի բնակարաններից մէկը վարձած է ունեցել ոմն Բաբուխեան, արհեստով ոսկերիչ։ Ոստիկանութիւնը ներս մտնելու բոպէին, Բաբուխեանը շինելիս է եղել հինգ րուբլիանոցներ և բռնվում է յանցանքի տեղում։ Նոյն տեղում գտնվում են զանազան պարագաներ դրամ շինելու համար և մի քանի հատ դեռ չը շինված և արդէն պատրաստի կեղծ հինգ րուբլիանոցներ, փոշի՝ ոսկեջրելու համար, արծաթէ գաւաթներ և այլն։

✦ Կովկասագիտական բարձր կուրսերում մօտ օրերս դասախօսութիւններ կը կարդայ յայտնի օդերևութաբան և կլիմայագէտ Գ. Լիմէյ։

✦ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսի դումայի ձայնաւոր ինժեներ Արշակ Սերգէևիչ Բաքովը աքսորվում է Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան՝ սահմաններից։

✦ Ռ. սինօդը առաջարկել է վրաց հոգեւորականութեան՝ հոգևոր սեմինարիայի հին շինութիւնը փոխանակել Վերայում կառուցած նոր շէնքով։

✦ Ներկայումս Թիֆլիսի քաղ. վարչութեան և էլեկտրաքարշի ընկերութեան վերատեսչի միջև տեղի է ունենում սուր գրագրութիւն։ Անօնիմ ընկերութիւնը հրաժարվում է կառուցել Նախալօվկի գիծը քաղաքի հետ կապած պայմանի համաձայն։ Վարչութիւնը ճարահատեալ ընկերութիւնից պահանջել է նոր նախագիծ ներկայացնել։ Միւս կողմից ընկերութիւնը հրաժարվում է կառուցել նաև Աւճալեան գիծը, մացնելով նրան ընդհանուր ցանցի մէջ Մօստովայա և Նիկոլաևսկի փողոցներով, ուստի քաղ. վարչութիւնը, դադարեցնելով ընկերութեան հետ ապարդիւն գրագրութիւններ ունենալը, առաջարկել է ընկերութեանն Աւճալեան գիծը կառուցել նրա այժմեան սահմաններում, այսինքն մինչև Բադիեմի փողոցի գլուխը, Վօկզալի հրապարակում միացնելով ընդհանուր ցանցի հետ։ Իսկ գիծը Վօրոնցովի մօտ միացնելու համար քաղ. վարչութիւնը տալու է առանձին հրահանգ։

✦ Էլեկտրաքարշի ծառայողների երաժշտական-դրամատիքական միութեան կանոնադրութիւնը օրինականացված է։ Երէկ չէ առաջի օրը կայացաւ միութեան առաջին ընդհանուր ժողովը, ուր ընտրվեցին պաշտօնական անձինք։

✦ Մօտ օրերս բժիշկները քննել են Թիֆլիսի սինօդալնու նախկին գանձապահ Ա. Արտազեանին, որը, ինչպէս յայտնի է, իւրացրեց 200,000-ից աւելի գումար։ Բժիշկները խորհրդակցելով՝ որոշ եզրակացութեան չեն կարողացել գալ նրա մտաւոր կարողութեան թուլութեան վերաբերութեամբ։ Վճռված է Արտազեանին մի որոշ ժամանակ տեղաւորել հոգեկան հիւանդների բաժնում։

✦ Նաւթլուղի էլեկտրաքարշի գծի աշխատանքները արագ առաջ են գնում։ Գծի երթևեկութիւնը մինչև Նաւթլուղի հրապարակը, որ մօտ է զինւորական հիւանդանոցին, մտադրութիւն կայ սկսել հոկտեմբերի 15-ից։

✦ Ախալքալաքի գաւառի Գօսաշէնի և Ալնի գիւղերի, Ախալցխայի գաւ. Մօդզեվնի գիւղի և Բօրչալուի գաւ. Ջանդար գիւղի բնակիչները պատգամաւոր իշխանութեան առաջ միջնորդութիւն են յարուցել՝ թոյլատրելու առաջիններին գաղթել Կարսի շրջանը պետական ազատ հողերի վրա բնակութիւն հաստատելու համար և նպաստ տալ գանձարանից. երկրորդներին պետական ազատ հողամասեր տալ որևէ նահանգում, իսկ վերջիններին նոյնպէս հողեր տալ Թիֆլիսի նահանգի գաւառներից մէկում։

✦ Գօրու քաղաքային ինքնավարութիւնը որոշել է Գօրում գոյութիւն ունեցող Անդրէևսկի դպրոցը վերակոչել Ճավճավաձեան։

✦ Մօտ օրերս Բագուի քաղաքագլուխը դիմել է Բագուի նահանգական մէջլիսի նախագահ ղաղի Միր-Մահմէդ Քերիմին մի նամակով, որով բացատրում է, որ քաղաքի մահմեդական ազգաբնակութիւնը մեծ նախապաշարմունքով և երկիւղով է վերաբերվում խօլերային հիւանդանոցում բժշկվելուն և տների մէջ ախտահանութիւն կատարելուն։ Նամակի վերջում քաղաքագլուխը խնդրում է ղաղիին, իբրև ազդեցիկ անձի, ամեն կերպ աշխատել այդ ցաւալի երևոյթի առաջն առնելու։

✦ Սեպտեմբերի 21-ին Բագուի քաղաքապետ գեներալ-մայոր Կոնեվսկին իր մօտ է հրաւիրել նաւթարդիւնաբերական ֆիրմաների մեքենայական գործարանների և նոր փորող կապալառուների ներկայացուցիչներին, առաջարկել է նրանց ծանօթանալ այն հրահանգի հետ, որը մշակված է լիազոր անձանց գործարան մտնելու թոյլտուութեան վկայական տալու մասին, որպէսզի նրանք կարողանան ժողովել բանւորներին և բացատրել նրանց նաւթարդիւնաբերական և բանւորական խորհրդակցութեան նպատակն ու իդէան։ Լիազորները պէտք է լինեն 12 հոգի։ Քաղաքապետը խնդրել է նպաստել ընտրված լիազորներին, որպէսզի ժողովները կայանալու դէմ արգելքներ չը զարթեցնեն։

✦ «Руно» նաւթային ընկերութեան ադմինիստրացիան, արհեստաւորների ու բանւորների պատգամաւորների խնդրքով, սեպտեմբերի 21-ին հեռագրով դիմել է ընկերութեան վարչութեանը և յայտնել, որ բանւորները պատրաստ են հրաժարվել իրանց բոլոր պահանջներից ու վերսկսել աշխատանքները, միայն թէ ներկայ տարվայ առաջին կիսամեակի պարգևը այժմ բաշխվի այն չափով որ յիշված է իրանց պահանջներում, հակառակ դէպքում պատրաստ են սպասել նաւթահանքի տիրոջ վերադարձին, քաշելով օրական քառասուն հազար պուդ նաւթ։ Նաւթահանքի տէր Լիանօզօվը սեպտեմբերի 22-ին պատասխանել է, որ վարչութիւնը իր որոշումը փոխել չէ կարող, ոչ մի պահանջ չէ ընդունում և պատճառած վնասների համար պարգև չէ կարող տալ։ Վարչութիւնը համաձայն է միայն վերընդունելու գործադուլարարներին և այն էլ առանց վարձատրելու գործադուլի օրերի համար։ Իր գալուն անելորդ է համարում սպասել. կարող է բոլորովին չը գալ։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը՝ ընդհանուր ուսում մտցնելու նախագիծը իրագործելուց առաջ՝ նպատակ ունենալով պարզել ուսուցչական պաշտօն վարելու համար եղած ազատ թեկնածուների թիւը, հարկաւոր տեղեկութիւններ է պահանջել զեմստվօներից ու քաղաքներից։ Ստացված պատասխաններից երևում է, որ ներկայումս կան մօտ 19,346 թեկնածուներ, որոնք ցանկութիւն են յայտնել ուսուցչական պաշտօն վարելու, բայց տեղ չը լինելու պատճառով մնում են անպաշտօն։ («Тов.»)

✦ Ապահովագրական ընկերութիւնների ներկայացուցիչների համառուսական ժողովը որոշել է դիմել ներքին գործերի մինիստրութեանը՝ խնդրելով որ այսուհետև ապահովագրական տուրքերը քաղաքների տրամադրութեան տակ դրվեն հակահրդեհային միջոցների համար գործադրելու նպատակով։ Այդպիսով քաղաքները կարող են ունենալ տարեկան 6 միլիոն րուբլի եկամուտ ապահովագրութիւններից։ («Т.»)

✦ Համառուսական արհեստակցական միութիւնների համագումար հրաւիրելու համար կազմակերպված մասնաժողովը, «Тов.» լրագրի ասելով, տեղեկութիւն է ստացել, որ արհեստակցական միութիւնների գործունէութիւնը Կովկասում եռում է, եռանդուն պատրաստութիւններ են տեսնվում համագումարի համար։ Համագումարի օրակարգի հարցը քննվում է թէ լրագիրներում և թէ ժողովներում։ Միևնոյն ժամանակ ստատիստիքական տեղեկութիւններ են հաւաքվում Կովկասի մէջ սկսված արհեստակցական շարժման դրութեան մասին համագումարին զեկուցանելու համար։

✦ Խօլմի ռուս ժողովրդի դաշնակցութեան բաժանմունքը դիմել է մինիստրների խորհրդի նախագահին, խնդրելով որպէս զի Խօլմի երկիրը Լեհական Թագաւորութիւնից բաժանելուց յետոյ արգելվի մայորատների ռուս սեփականատէրերին իրանց կալուածները կապալով տալու լեհերին։ Առանց այդ միջոցների, դաշնակցականների կարծիքով, անկարելի է երկրի ռուսացումը, որովհետև այժմ ռուսական բոլոր մայորատների կալուածները գտնվում են լեհերի ձեռքում, որոնք խոչընդոտ են հանդիսանում ռուսացման։ («Тов.»)

✦ Պետական Դումայի սոց.-դեմօկրատական ֆրակցիայի գործը քննվելու է դատաստանական պալատում մօտաւորապէս հոկտեմբերի 20-ին։

✦ Առանձին կարևոր գործերի զինւորական քննիչը, «Рѣчь» լրագրի ասելով, մօտ օրերս վերջացրել է Վարշավայի ամրութիւնների թնդանօթաձիգ գնդի հրամանատար գեներալ-մայոր Դ.-ի գործը, որով նա մեղադրվում է կայսերական անձանց խօսքերով վիրաւորելու համար։ Գեներալ Դ.-ն այժմ հեռացված է պաշտօնից և դատի կենթարկվի։

✦ Ֆինլանդական սէյմի հիմնական օրէնքների մասնաժողովը, որին յանձնված էր քննել 20 միլիոնի հարցը, 9 ձայնով ընդդէմ 7-ի որոշել է յիշեալ գումարը վճարելու պահանջը համարել համապատասխան երկրի մէջ տիրապետող օրէնքներին, ապա ուրեմն և պէտք է կատարել։ («Рѣчь»)

✦ Ֆինլանդական սէյմը իր վեցերորդ նիստում, երկաթուղային մասնաժողովի առաջարկութեամբ, որոշել է (90 ձայնով ընդդէմ 82-ի) երկաթուղային ծառայողների աշխատանքները թեթևացնելու նպատակով կրճատել ապրանքատար գնացքների երթևեկութիւնը կիրակի և տօն օրերին։ («Т.»)։

✦ Իսկական ռուս մարդկանց «Рус. Зн.» թերթը իր ժամանակին մի կոչ էր տպագրել իսկական-ռուսական համալսարան հիմնելու նպատակով հանգանակութեան ձեռնարկելով։ Այժմ նոյն թերթը հաղորդում է, որ $1\frac{1}{2}$ ամսվայ ընթացքում յիշեալ կոչին արձագանք են տուել միայն մի քանի հոգի, և հանգանակված գումարը եղել է ընդամենը 6 ր.։

✦ «Русь» լրագրի խմբագիր պ. Կարամալայը, արգելված հրատարակութիւնից նկատողութիւն արտատպելու համար, ենթարկվել է 1000 ր. տուգանքի։ («Р. В.»)

✦ Հելսինգֆօրսից «Сегодня» լրագրին հաղորդում են, որ այստեղ սեպտ. 15-ի երեկոյեան ժամը 10-ին Կիմի կայարանում 15 հոգուց բաղկացած ամբոխը գնացքը կանգնած ժամանակ հաւաքվելով այն վագոնի առաջ, որի մէջ նստած էին սենատորներ՝ Մեխելինն ու Իգնացիուսը, սկսեց աղմուկներ բարձրացնել։ Ոստիկանութիւնը դժուար հեռացրեց ամբոխին սենատորական վագոնի մօտից։ Ոստիկաններն իրանց վրա քարեր նետողներին ծեծում էին բռունցքներով։ Երբ մի քանի բոպէ կայարանում մնալուց յետոյ գնացքը ուղևորվեց և ոստիկանները անցան 3-րդ կարգի վագոնը, ամբոխը շարունակեց հետևել նրանց և ֆիննական դանակով վիրաւորեց ոստիկան Սալմային կողքից։ Յարձակման է ենթարկվել կայարանի մի բանւոր ևս, որը օգնում էր ամբոխի ցրվելուն։ Ցոյցերի պատճառը 20 միլիոն ֆրանկի յատկացման պահանջն է, որի ջերմ պաշտպանն էր հանդիսանում սենատոր Մեխելինը, որ վերջերս այդ հարցի առիթով խիստ կերպով խօսել է ֆիննական սօցիալ-դեմօկրատների դէմ, որոնք սկզբունքային դիտումների պատճառով պատրաստ են Ֆինլանդիան վտանգի ենթարկել։

✦ Մոսկվայում հրատարակվող «Часъ» լրագիրը գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցված է, որովհետև նրա խմբագիր Բելեավսկին, իր վրա նշանակված 1000 ր. տուգանքը չը վճարելու պատճառով, կալանաւորված է այժմ, իսկ նրա տեղ խմբագրական գործերը վարում է փակված «Вѣкъ» լրագրի խմբագիրը։ («У. Р.»)։

✦ Սեպտեմբերի 23-ին Մոսկվայում առևտրական հաստատութիւնների ծառայողների առաջին միութեան և սպառողական ընկերութիւնների միութեան անդամների ընդհանուր ժողովում կայացել է Վ. Տօտօմեանի զեկուցումը Հիւսիսային Իտալիայի Կրեմօն քաղաքում նորերս կայացած կօօպերատիվ միութիւնների միջազգային կօնգրեսի հետևանքների մասին, որի պատգամաւորների թւում եղել է և ինքը։ («Ут. Р.»)։

✦ Վերջին ժամանակներս Մոսկվայի շրջանի ոստայնագործական փաբրիկների տէրերը մեծ քանակութեամբ առնում են ամերիկական բամբակ, որը այժմ 15 կոպէկով էժան է ծախվում, քան ռուսականը։ Այդ հանգամանքը անշուշտ կազդէ ռուսական բամբակի գների վրա և կը ձգէ նրանց։ Ինչպէս երևում է, Միջին Ասիայի բամբակի առևտուրով պարապվողները այնքան էլ լաւ չեն ըմբռնում իրերի դրութիւնը, հրաժարվում են վաճառել գոյութիւն ունեցող բարձր գներով և նպաստում են թանգութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, սեպտեմբերի 19-ին

Ո՞ւմ դիմենք. մեր ձայնը լսող չը կայ։

Ամբողջ տարիներ հազար ու մի տեսակ ֆիզիքական ու հոգեկան տանջանքներ կրելով մենք մի կերպ հասել էինք Ե. և Զ. դասարանները։ Այդ դասարանները փակեցին, իբրև թէ նիւթական սուղ պատճառով։ Այո, Ե. և Զ. դասարանները փակեցին. բայց Երբ… հէնց այն ժամանակ, երբ մօտենում էր առաջիկայ ուսումնական տարին, երբ մօտենում էր սեպտեմբերը։ Ասում են դըպրոցը միջոցներ չունի. ապա ո՞ւր է այն «խիզախը», որը Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու բեմից աւետում էր հասարակութեանը՝ «դպրոցը դեռ երկու տարի սրանից յետոյ ապահովված է…»։ Նա լուռ ու յամր է, խպառ խլացած, ոչինչ չէ լսում։ Այո, չեն ուզում լսել այն աշակերտների բողոքը, որոնք Վարանդայի ու Զանգեզուրի հեռաւոր ու խուլ անկիւններից նոր եկել են Շուշի և կարդալ են ուզում, ուզում են սովորել, բայց դպրոցի դռները փակ են նրանց առաջ։ Նրանց լացին լսող չը կայ, նրանց արտասուքը սրբող չը կայ։ Հասարակութիւնը անտարբեր է, լուռ ու անվրդով։ Ո՞ւմ դիմենք. մեր դառն, անտանելի վիճակին, աննախանձելի դրութեանը կարեկցող չը կայ, մեր ձայնը, մեր բողոքը արձագանք չէ տալիս հասարակութեան լայն խաւերում։ Մի՞թէ մենք ենք միայն հասարակութեան խորթ զաւակները։

Մեր ընկերներից մի քանիսը դիմել են Թիֆլիս՝ Ներս. դպրոցը, մի խումբ՝ Գէորգեան ճեմարան, մի մասը՝ Երևանի թեմ. դպրոցը։ Սակայն բոլորի ջանքերը ի զո՜ւր, ապարդիւն։ Մէկում տեղ չը կայ, միւսում—ընդունելութիւն, իսկ երրորդում այնպիսի բարդ պայմաններ են առեղծել, որ ընկերները ստիպված են եղել թողնել ու հեռանալ։ Մեր ցաւերը դեռ բաւական չէին, այդ էլ մի կողմից բարդեցին մեր շլինքին։ Աղքատ, ամեն տեսակ նիւթական միջոցներից զուրկ ընկերները մի կերպ, պարտք ու պատուհասով գնացին Թիֆլիս, Երևան, Վաղարշապատ, ամբողջ տասնեակ օրեր սպասել են տալիս մանկավարժական խորհրդին, հոգաբարձական ժողովին—ու վերջը պատասխանում՝ «տեղ չը կայ», «ընդունելութիւն չը կայ»։

Մենք փողոց ենք նետվում… Մենք գլորվում ենք հասարակութեան լայն խաւերի ծոցը. բայց մեզնից ի՞նչ օգուտ հասարակութեան։ Պարզ է, որ հասարակութիւնը երբէք չի ճաշակի այն պտղից, որը տհաս է, հոտ չի առնի այն վարդի կոկոնից, որը դեռ չի բացվել և որոնց նմանը մենք ենք համարվում։ Այժմ ո՞ւր գնանք, ո՞ւր… քեզնից ենք հարցնում, լռած, պապանձված հայ հասարակութիւն։ Մեզ մի ճանապարհ ցոյց տուր։ Մեր աղքատ, անկար ու անմխիթար ծնողների արցունքոտ հայեացքները մեզ են ուղղված։ Մե՜զ, անբաղդներիս, որ մօտալուտ ապագայի հեռանկարը սանձարձակ հրէշի պէս անխնայ կծում ու լափում է մեր սիրտը, մեր հոգին քայքայում, ոչնչացնում։ Այո, մեզ, դժբաղդներիս, որ հազար ու մի տեսակ նեղութիւններով, արիւն քրտինք թափելով մեր ծնողները նպաստել են ու Ե. և Զ. դասարանները հասցրել։ Մենք քրտինքի պարտք ունենք հատուցանելու, արիւն քրտինքի։

Սակայն ո՞րտեղից… Փողոցի՞ց…

Ղ. Հ. Թ. Դ. V և VI դաս.
մի խումբ աշակերտներ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

V

Հայկական տարրին մեծագոյն վնաս է հասցրած Կրետէի և առհասարակ յունական խնդիրը։ 1880-ին առաջին ուժեղ եւրոպական միջամտութիւնն էր յօգուտ 61-րդ յօդուածի և սուլթանն իր սովորական խաղերով, կէս զիջումներով ձգձգեց հարցը, մինչև որ յունական սահմանագլխի խնդիրն երևան ելաւ, և եւրոպական դեսպանները ստիպվեցին լրջօրէն զբաղվել այս վերջին խնդրով։ Թէպէտ անգլիական կառավարութիւնը 1881 յունվարի 12-ին դարձեալ դիմեց եւրոպական պետութիւններին, որ Հայաստանի խնդիրն էլ միևնոյն ժամանակ կարգադրվի և մի նոր հաւաքական յայտագիր տրվի Բ. Դրան, որին համաձայնութիւն ցոյց տուեց Ռուսաստանն ևս, բայց անողոք Գերմանիան՝ յանձին իր կարծրասիրտ Բիսմարկի՝ պատասխանեց լորդ Գրէնվիլին. «Երբ յունական խնդիրը վերջանայ, այն ժամանակ միայն պէտք է հայկական հարցը վերստին սկսել» (անգլ. Կապոյտ գիրք 1881 № 6 էջ 313)։ Բիսմարկն իր այս վճռական խօսքով թաղեց հայկական դատը, որովհետև երբ վերջ ի վերջոյ սուլթանը՝ պատերազմի սպառնալիքի ազդեցութեան տակ՝ Չեռնօգորիային և Յունաստանին զիջեց իր երկրի մի մասը՝ ըստ Բերլինի դաշնագրի, այնուհետև նոյն Բիսմարկը պնդեց, թէ այժմ էլ հարկաւոր է սուլթանին մի քիչ հանգստութիւն տալ…։ 1881-ից մինչև 1894 որևէ նոր հաւաքական դիմում չեղաւ, իսկ երբ սուլթանը մեծ կոտորածներից յետոյ 1896 թ. հոկտեմբերի 15-ին ընդունեց բարենորոգումների ծրագիրը և դեսպանները դեռ նրանց գործադրութեան վրա հսկելու մասին որևէ կարգադրութիւն չէին արել, ահա երևան եկաւ Կրետէի հարցը, որից առաջացաւ յունական պատերազմը։ Գերմանիան նորից մէջ մտաւ, պաշտպանեց իր բարեկամին, թիւրքական բանակը ջարդեց յունական զօրքը, և նա, որ 1877-ին Սուխումի ամբողջութեան վրա ծաղրական ղազի (յաղթական) տիտղոս էր ստացել, այժմ իրօք յաղթական դուրս եկաւ։ Դերերը փոխվեցին, և այնուհետև եւրոպական դեսպաններն իրանց աչքի տեսան թիւրք միապետին՝ գոռոզ իր յաղթութեամբ և յենված մահմեդական աշխարհի յարգանքի վրա, որովհետև վաղուց, շատ վաղուց էր, որ թիւրք բանակը քրիստոնեաների վրա յաղթութիւն տարած չէր…։ Թէպէտ թիւրքերի այս յաղթութիւնը նրանց որևէ նիւթական շահ չը տուեց, որովհետև կռուածաղիկը՝ Կրետէն այնուամենայնիւ ելաւ նրա իշխանութեան տակից և գրեթէ մնաց Յունաստանին, բայց բարոյապէս սուլթանի դիրքը շատ բարձրացաւ մանաւանդ իր կրօնակիցների աչքում։ Այնուհետև եւրոպական հաւաքական միջամտութիւնը վերջ գտաւ. հայկական հարցը թաղվեց դիւանագիտութեան մութ խորշերում. միայն երբեմն երբեմն, երբ հայ ժողովուրդը բռնութեան բեռի տակ ճնշված՝ խուլ հառաչներ էր արձակում, այս կամ այն դեսպանը մեղմ ազդարարութիւններ էր անում Բ. Դրան, և դրանով ամեն ինչ վերջանում էր։ Զգում էին եւրոպական պետութիւնները, որ իրանց միջամտութիւնը որևէ բարեբեր հետևանքի չը պիտի հասցնէր, քանի որ դառն փորձերը ցոյց էին տուել, թէ առանց թնդանօթի բերան ցոյց տալու անկարելի էր սուլթանին համոզել։ Խաղաղ միջամտութեան վերջին փորձն էլ եւրոպացի հայասէրների դիմումն էր ամերիկական նախագահին, բայց Ռուզվէլտն էլ, զգալով թէ իր միջամտութիւնը ցանկացված արդիւնքը պիտի չունենայ, քաղաքավարի կերպով հրաժարվեց։

Բոլոր այս դէպքերը եւրոպական դիւանագէտների մէջ այն համոզմունքը գոյացրին, թէ իրանց միջամտութիւնը յօգուտ հայերի՝ մի կողմից զայրացնում էր սուլթանին և թիւրքերին, միւս կողմից միևնոյն ժամանակ քաջալերում էր հայ յեղափոխականներին, և որովհետև այդպիսի պլատոնական ազդարարութիւնները իրօք շատ աւելի վատացնում էին Հայաստանի թշուառ ժողովրդի վիճակը, որոշեցին այլևս չը նորոգել նախկին տրագի-կոմեդիան։ Նրանց այս որոշումը շատ պարզ կերպով ապացուցվեց այս տարվայ յունիսի Մուշի դէպքերից յետոյ, երբ «Թայմզի» լաւատեղեակ թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում էր, թէ «…Եւրոպական դեսպանները մտադրութիւն չունեն կրկնել իրանց 11 տարի առաջ գործած սխալը, երբ իրանց՝ յօգուտ հարստահարված մի ազգի (հայոց) արած միջամտութիւնը քաջալերեց յեղափոխական շարժումը մինչև այն աստիճան, որ թիւրք կառավարութեան վրա երկիւղ ազդեց եւ գրգռեց նրան 1896-ի սոսկալի կոտորածները առաջ բերելու» («Times» 1907 թ. յուլիսի 18)։ «Թայմզի» այս կարևոր յայտարարութիւնը շատ պարզ կերպով բացատրում է եւրոպական պետութիւնների այժմեան զգուշաւոր ընթացքը։ Նոյն իսկ անգլիական կառավարութիւնը 1897-ից յետոյ այլևս չը հրատարակեց յատուկ «Կապոյտ գրքեր» հայկական բարենորոգումների մասին, թէև իր արևելեան դիւանատունը անկասկած լիքն է իր հիւպատոսների անթիւ տեղեկագիրներով խոստացված բարենորոգումների ոչնչութեան և ժողովրդի անտանելի կացութեան նկատմամբ։

Այս է եւրոպական պետութիւնների այժմեան հայեացքը հայոց հարցի մասին։

Հետեւեալ անգամ կը խօսենք այս հարցի ուրիշ պարագաների վրա։

Սարուխան

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Լօնդօն, սեպտ. 30-ին (ն. տ.)

Վերջին ժամանակներս հայի անունը յիշատակվում է թերթերի մէջ միացած շատ տխուր դէպքերի հետ։ Ամերիկայում կատարված սպանութիւնները արձանագրվեցին այստեղի թերթերում իրանց բոլոր մանրամասնութեամբ, որոնց հետ միասին վերյիշում էին աշխարհիս չորս կողմը կատարված հայկական սպանութիւնները, մինչև անգամ այնպիսի լուրջ թերթեր, ինչպէս „The Daily Telegraph“-ը, և այդ բոլորի մէջ գտնում էին մի կապ և բացատրում Pakcam Ray-ի Հնչակեան սպանութեան օրինակով։ Ունճեան, Ջիթչեան, Սագունի, Թավշաճեան և մի ինչ-որ քահանայ, անուններ են, որոնք յաճախ յիշատակվում են թերթերում նմանօրինակ դէպքերի ժամանակ։ Այդ բոլորը շատ անախորժ է տեսնել օտար թերթերի մէջ, բայց աւելի ևս անտանելի է դառնում, երբ դրանց հետ միասին գրվում են սխալ, մտացածին պատմութիւններ։ Օրինակ, թերթերից մէկը մի խոշոր ազդագիր էր բաց թողել, որի վրա մեծ տառերով գրված էին այս խօսքերը. «Հնչակեան դաւադիրները Լօնդօնում», իբր թէ հնչակեանների կենտրոնը գտնվում է Shepherd's Bush-ում, որտեղից տեղափոխում են զէնքերը, և այլ սրա նման չինծու պատմութիւններ։

Այս օրերս «Times»-ից սկսած մինչև «Daily Mail»-ը տպագրեցին երկար յօդուածներ «հայի ապերախտութեան մասին»։ Այստեղ յիշատակված հայը մի անհատ է, որին կոտորածների ժամանակ ազատել է մահից յայտնի «Բուկ» ընկերութիւնը և միջոցներ տալով տեղափոխել է Լօնդօն, առել է նրան իր հովանաւորութեան տակ, թէև վերջինս միշտ թերացել է իր պարտականութիւնների մէջ և մինչև անգամ ծուլացել է թեթև գործեր կատարելուց, չը նայելով որ դրա համար բառ պատշաճի վարձատրվել է։ Երկու անգամ սաստիկ հիւանդանում է, և ընկերութիւնը երկու անգամ էլ հոգում է բժշկութեան բոլոր ծախքերը և լաւանալուց յետոյ առաջարկում է հային կատարեալ բժշկվելու համար ճանապարհորդել Եգիպտոս՝ յանձն առնելով ճանապարհածախքը և վեց ամսվայ կանխիկ ռոճիկ։ Բայց հայը մերժում է այդ և փաստաբանների հետ բանակցութիւն է սկսում 20,000 րուբլու պահանջ անելու մտադրութեամբ դատաստանով յիշեալ ընկերութիւնից, որը պատճառ է եղել իրան հայրենիքից հեռացնելու։ Միաժամանակ նա դրամական օժանդակութիւն է խնդրում յայտնի անգլիացի բարեգործներից, պարլամենտի անդամներից, քահանաներից և այլն։ Դիմում է այդ մասին արտաքին և ներքին գործերի մինիստրութեանը, և վերջինս քննութեան է առնում հայի խնդիրը։

Չը նայելով դրան, ընկերութիւնը նորից առաջարկում է հային ճանապարհածախք Բօլգարիա գնալու և 100 րուբլի դրամ, բայց հայը այդ մերժում է և գնում ապրում է մի անգլիացու մօտ, ասելով որ իր անունը «Բուկ» է և ինքը այդ ընկերութեան ներկայացուցիչն է և բոլոր ծախքերը պիտի այդ ընկերութիւնը վճարի։ Ծախքերը հասնում են մինչև 120 ր., և անգլիացին տեղեկանում է, որ հայը կապ չունի ընկերութեան հետ, և վերջինս ոչ մի պարտականութիւն չունի դէպի հայը. ահա այդպէս հայը ձերբակալվում է «խաբեբայութեան» համար, և խնդիրը բացվում է դատարանում, որտեղ լուրջ կերպարանք ստանալով տեղափոխվում է մեծ դատարանը։ Խնդիրը ըստ ինքեան մի անհատի է վերաբերում, բայց թերթերում յիշատակվեց իբր «Մի արձագանք մի կոտորածի» (հայկական կոտորածների)։

Այսօր, „The Daily Mirror“ պատկերազարդ օրաթերթը տպագրեց մի հայ օրիորդի պատկեր, օմն օրիորդ Լ. Գասպարեան, որի հայրը, Միքայէլ Գասպարեանը, եղել է գըլխաւոր թարգման լորդ Վօլսելի Գօրդօնին ազատելու համար կատարած արշաւանքի ժամանակ։ Թերթը ասում է, որ այս հայ օրիորդի մօրեղբայրն է հայոց պատրիարք Յովսէփ Գասպարեանը (?)։ Օրիորդը, որը, որպէս պատկերը ցոյց է տալիս, շատ գեղեցիկ է, ամուսնանում է այսօր մի անգլիացու հետ։ Այս անունը ես առաջին անգամ լսեցինք այստեղի գաղութի անդամներից։ Թէ այս և թէ վերևի փաստը ցոյց են տալիս, թէ դեռ որքան հայեր կան Լօնդօն, որոնք անյայտ են մնացել գաղութիս, և որոնց մասին լսվում է միայն օտար թերթերից մի որևէ արտակարգ առիթով։

Յիշատակենք այստեղ և մի այլ հայ օրիորդի, որի անուան հետ արդէն հայ ընթերցողը ծանօթ է. Esperanto նոր լեզուի միջազգային կօնգրէսը տեղի ունեցաւ այս տարի Քէմբրիճում։ Գիլթ-Հօլի մէջ ևս մեծ հանդէս կատարվեց, ուր տրվեց մի ներկայացում։ Խաղացողները պատկանում էին տարբեր ազգութիւնների։ Կանայք պատասխանատու դերերից մինը յանձնված էր օրիորդ Զ. Փօյաճեանին։ Շնորհալի օրիորդը մեծ հմտութեամբ կատարեց իր դերը և արժանացաւ հանդիսականների գնահատման երկարատև ծափահարութիւններով։ Հայ օրիորդի պատկերը միւս դերակատարների հետ զետեղված էր «The Graphic» նշանաւոր պատկերազարդ շաբաթաթերթի մէջ։ Օր. Զ. Փօյաճեանը միջազգային լեզուի ընկերութեան Լօնդօնի ճիւղի հիմնադիրներից է և այդ ընկերութեան Լօնդօնում հիմնվելուց ի վեր մինչև այս տարի վարչութեան անդամներից մէկն է կազմում։

Զարեհ Տիրանեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թիւրքիայի հետ պատահած միջադէպը, ինչպէս հաղորդում է «Р.»-ը, մեծ գրգռում է առաջ բերել Թեհրանում. այդ պատճառով շահը մայրաքաղաք է վերադարձել սովորականից աւելի շուտ։ Շաբաթ օրը նա քաղաք մտաւ ձիով, կօզակ պահակախմբի ուղեկցութեամբ, որի առջևից գնում էր թընդանօթաձիգ գունդը։

Այն փողոցներում, որտեղից անցնելու էր Շահը, երկու կողմից շարքով պատուար էին կազմել զօրքերն ու ժանդարմները։ Պալատի մօտ հասնելով Շահը մէջլիսի պատգամաւորներին ժողովի հրաւիրեց պահանջելով կաբինետից միասին քննել սահմանային և ուրիշ անյետաձգելի հարցերը։

Մէջլիսի նախագահը մի ազդու ճառ արտասանեց, քննադատելով երկրի ֆինանսական վիճակը։

«Առանց փողի այլևս անհնարին է մնալ։ Օտարերկրեայ փոխառութիւնը կործանարար կը լինէր երկրի համար։ Երբ ես արտասահմանումն էի, լրագիրներում յաճախ առիթ եմ ունեցել կարդալու ազգային բանկ հիմնելու մասին։ Արդ՝ ո՞ւր են փօնդերը»։

Հայրենասիրական ոգևորութեան ազդեցութեան տակ՝ ներկայ եղողները հէնց այդտեղ էլ կէս միլիօն թումանի ստորագրութիւն տուին։ Հանգանակութեան սկզբնաւորութեան հիմք դրեց արքայազն Զիլլի-Սուլթանը 100,000 թումանով։

Սահմանային հարցի առիթով կարդացվեց Բարձրագոյն Դրան պատասխանը Անգլիայի և Ռուսաստանի պաշտօնական դիմումին։ Այդ պատասխանի մէջ ասված էր, որ սուլթանը տեղեկութիւն չունէր Պարսկաստանի մէջ կատարվող խռովութեան մասին։ Նա իր կողմից ամենախիստ կարգադրութիւն արեց մաքրել պարսկական հողը թիւրքական զօրքերից։

Շահը խոստացաւ ժողովին մէջլիսի բացման տարեդարձի օրը անձամբ ներկայ լինելու նրա նիստին։

ՉԵՐՆՈԳՈՐԻԱ

Սահմանադրական կարգերի ճգնաժամը.— Վիէննայից, օգոստ. 25-ից, հեռագրում են, որ Չերնոգորիայի լուսաւորութեան մինիստր Պլամենակը «Zeit» լրագրի խմբագրին յայտնել է, թէ սահմանադրութեան շնորհումը Չերնոգորիայի քաղաքական կուսակցութիւնների մէջ մեծ պայքարների պատճառ է դարձել։ Եթէ գժտութիւնները դեռ շարունակվեն, այդ դէպքում իշխանութիւնը կարող է վտանգի ենթարկվել։

Չերնոգորական իշխանապետութեան սխալը կայանում է այն բանում, որ՝ իր երկրում սահմանադրական կարգեր մտցնելով՝ կամեցել է միւս պետութիւններին նմանվել, առանց ի նկատի ունենալու կեանքի այն մասնաւոր պայմանները, որոնց մէջ գտնվում է այդ փոքրիկ իշխանապետութիւնը և որոնց շնորհիւ իւրաքանչիւր չերնոգորացի իր երկրի զինուորն է և ուր, ուրիշ երկիրների նման, գոյութիւն չունեն կազմակերպված ու կանօնաւոր բանակներ՝ միանգամայն անկախ քաղաքական կեանքից։

ԲՕԼԳԱՐԻԱ

Բօլգարիան անկախ.— Բերլինից, սեպտ. 2-ից, հեռագրում են. «Berl. Tag.» լրագրին հաղորդում են, թէ Ֆրանց-Յովսէփ կայսրի և Էդուարդ թագաւորի միջև Իշլում կայացած տեսակցութեան միջոցին երբ խօսք բացվեց Բալկանեան թերակղզու խնդիրների վերաբերմամբ, Ֆրանց-Յովսէփ կայսրը յայտնեց, թէ ժամանակ է, որ այլ ևս Բօլգարիան ճանաչվի որպէս անկախ թագաւորութիւն։ Հաւաստում են, թէ Էդուարդ թագաւորը համակարծիք է աւստրիական կայսրին։

ԹԻՒՐՔԻԱ

Անկարգութիւններ բանտում.— Ադրիանուպօլսից հաղորդում են, որ սուլթանի տարեդարձի օրն այդ քաղաքի բանտում բաւականին մեծ անկարգութիւններ են տեղի ունեցել։ Բանտարկեալները, բոլորն էլ խօսք մէկ արած, կանչում են բանտապետին իրանց մօտ և փող են տալիս նրան, խնդրելով որ իրանց համար օղի բերել տայ։ Բանտապետը համաձայնվում է։ Բանտարկեալները, արբելով, սկսում են զէնքի դիմել, որի հետևանքը լինում է այն, որ մի քանի րոպէում սպանվում են 11 հոգի և ծանրապէս վիրաւորվում 5—6-ը։ Ոստիկանութեանը հազիւ է աջողվում բանտ ներս մտնել և կարգը վերականգնել։

Ֆինանսական տագնապը.—Թիւրքիան ներկայումս ֆինանսական խիստ ծանր տագնապի մէջ է գտնվում։ Տուրքերի հասոյթն այս տարի, հունձքերի սակաւութեան պատճառով, շատ աննշան է եղել, այնպէս որ՝ Ադրիանուպօլսի վիլայէթի բիւջէն 1,000,000 օսմ. ոսկի բաց ունի, Էրզրումինը՝ 800,000, իսկ Զմիւռնիայինը՝ սովորականից 50% պակաս։ Այդ պատճառով Թիւրքիան այս րոպէիս կարիք է զգում 50,000,000 ֆրանկի փոխառութիւն կնքելու, բայց ո՞վ է այդ հսկայ գումարը փոխ տուողը...

Յուզումներ թիւրք զօրքերի մէջ.—Կ. Պօլսից, օգոստոսի 31-ից, հեռագրում են, թէ Տրապիզոնի ու Խարբերդի զօրքերի մէջ ծանր խռովութիւններ են պատահել՝ Բիթլիսի և Էրզրումի խլրտումների նման։ Ըմբոստ զինուորներին հպատակեցնելու համար՝ թիւրք զօրքերին հրաման է արձակվել զէնքի դիմելու։ Ըմբոստներից շատ-շատերն սպանվել կամ վիրաւորվել են։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ներքին

25 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր ի կատար ածվեց Պետերբուրգի զինուորա-նահանգական դատարանի դատավճիռը, որի համաձայն կախվեցին Նէվսկի գործարանի վերատեսչին սպանողներ Սամուիլօվը, Լապկինը, Միշկինը, Կօնդրաշօվը, Եւստաֆիևը, Կասիւն և Ակատուևսկի բանտի կառավարչին սպանող Իվանօվը։

ՄՕՍԿՎԱ։ Միապետականների կուսակցութեան նախագահ Գրինգմուտը ծանր կերպով հիւանդացաւ։

ՌԻԳԱ։ Սեպտ. 25-ին, երեկոյեան ժամը 9-ին, մի աւազակախումբ յարձակում գործեց ճանապարհորդական գնացքի վրա, որ Իւրիեվից գնում էր Վալկ, Ելվա և Բօկինհօֆ կայարանների միջև։ Մտադրվելով կողոպտել դրամատարին, չարագործները սկսեցին կրակել նախավերջին վագօնի վրա, որի մէջ դրամատարն էր գտնվում։ Գնացքը, կանգ չառնելով, առաջ գնաց։ Վախեցած ճանապարհորդները իրարանցման մէջ սկսեցին այս ու այն կողմը վազել վագօնների մէջ։ Կարծում են, որ կան վնասվածներ։ Կողոպուտը չաջողվեց։ Չարագործները փախան, թռչելով գնացքից։ Եղելութեան տեղը գնացին իշխանութիւնները և ոստիկանութիւնը։

Արտաքին

25 սեպտեմբերի

ՍԻՄԼԱ։ Հացը Բօմբէյում, Մադրասում, Վանօյում և Արևելեան Բենգալիայում լաւ է. Արևմտեան Բենգալիայում անբաւարար է. Ագրա և Օուտ նահանգներում հացը բոլորովին փչացաւ. վախենում են սովից։ Պէնջաբում բերքը վատ է։

26 սեպտեմբերի

ԳԻԲՐԱԼՏԱՐ։ Մուլէյ-Հաֆիդի 2 դեսպանները դիմեցին Անգլիա թարգմանի ուղեկցութեամբ այն նպատակով, որ ունկնդրութիւն խնդրեն թագաւորից և աշխատեն ձեռք բերել նրա համաձայնութիւնը՝ Մուլէյ-Հաֆիդին սուլթան հրատարակելու համար։ Նոյն միսսիայով դեսպանները գնալու են գերմանական և իտալական դեսպանների մօտ։

ՇԱՆԽԱՅ։ Ժամանեց ամերիկական զինուորական մինիստր Տաֆտը իր շքախմբով։

ՊԷԿԻՆ։ Ֆինանսների մինիստրութիւնը բացատրեց, որ ֆինանսական տարվայ վերջը սպասվում է 30 միլիօն տաէլ դեֆիցիտ։ Պէկինում երկիւղ են կրում, որ արտաքին փոխառութիւն կնքելը անհրաժեշտ դառնայ, որովհետև գաւառական հաստատութիւնները կարող չեն լինի ծածկել դեֆիցիտը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամէն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս), միզասեռ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Մի փորձված տիրացու,

որը շատ է եղել հայ եկեղեցիներում և վանքերում, այժմ ցանկանում է տիրացու լինել։ Հասցէն՝ Арсенальная ул., Красногорскій переул. № 8. А. Ароянцъ.

1—1

Մի ինտելլիգենտ ընտանիք
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՆԱԽԼԷԲՆԻԿՆԵՐ

Կարելի է դասերի կրկնողութեամբ։ Պատրաստում է երկսեռ աշակերտներին բոլոր միջնակարգ դպրոցների համար։

Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն կամ Уголъ Екатерининской и Панасевича ул. № 3. кв. Есаянцъ, близъ коммерчесскаго училища.

(ա. օ.) 3—5

ԾԱԽՎՈՒՄ Է
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ
ԴԱՍԱԳԻՐՔ
Բնական պատմութեան
(Մարդ, կենդանի, բոյս և հանք.)

Դասընթացք հայոց ժողովրդական և քաղաքային դպրոցների III, IV, V տարիների, ՈՒԹՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ մարդակազմական, կենդանաբանական և բուսաբանական ՆԿԱՐՆԵՐՈՎ։

Գինն է 65 կոպէկ

Դիմել «ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳԻ» և Թիֆլիսի գրավաճառներին, նաև հեղինակին՝ Тифлисъ, Ольгинская № 38, А. Атанасянцу. Դպրոցներին 20% զեղչ։ (հ. կ. ե.) 1—3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՍՈՒՆՔԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց՝ գործնական ձևով հաշուապահութեան և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1907 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская улица, № 22, ամենայն օր։

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։

(կ. ե. հ.) 10—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Արտասահմանում տպագրված 96 գոյնով 63—50 սանտ. մեծութեամբ
ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ 3-ՐԴ ԷԺԱՆԱԳԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ

ՈՐՊԷՍ ԶԱՐԴ
ԺԱՄԱՑՈՅՑԻ
ՇՂԹԱՅԻՑ ԿԱԽԵԼՈՒ
ՀԱՄԱՐ
Գինն է՝ ՈՍԿՈՒՑ 18 ր.
ԱՐԾԱԹԻՑ 3 »
ճանապարհածախսով

ԵՒ ՈՐՊԷՍ
ԲՐՕՇԿԱ
ԿԱՆԱՆՑ
ՀԱՄԱՐ
Գինն է՝ ՈՍԿՈՒՑ 15 ր.
ԱՐԾԱԹԻՑ 3 »
ճանապարհածախսով

Առանց կանխավճարի չէ ուղարկվում

(հ. կ. ե.) Դիմել՝ Тифлисъ. Вельяминовская, № 24, В. Варданяну. 6—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. № 24/4).

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմանակ. ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թուաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն (ամենաստ ձեռքի ուղղել)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտ. Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնն ամեն օր ժ. 10—12 և 4—7։

Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերից։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութիւնների կանդիդատ՝

Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(ա. օ.) 10—10

ՎԱՌ. ԵՒ ՍՏ.
ՍՄԲԱՏԵԱՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Ռոստովից Դ/վ. փոխադրվում է Թիֆլիս։ Նպատակն է՝ երաշխաւորութեամբ պատրաստել հայ երկսեռ երեխաներ ցանկացած միջնակարգ դպրոցը մտցնելու և հիմնօրէն սովորեցնել մայրենի լեզուն։ Կայ երկու գիշերօթիկի տեղ։ Պայմանների մասին ամենայն օր, Բէհբութեան փ., տ. Սմբ. Ջանփոլադեանի № 60։ (ե. հ. կ.) 7—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։

Միքայէլեան փողոց, № 27։
(ե. հ. շ. կ.) 3—50

Լոյս տեսաւ և վաճառվում է
Մ. ԱԲԵՂԵԱՆ
ՏԱՐՐԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ուղղագրական կանոններով և վարժութիւններով. ստորին դասընթաց. կազմված է համաձայն հայոց ծխական դպրոցների ծրագրի։ Գինն է 25 կոպէկ։

Նոյն հեղինակի
ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ուղղագրական կանոններով. միջին դասընթաց։ Գինն է 75 կոպէկ։

Գումարով գնողների համար առաջին գիրքն արժէ 20 կ., իսկ երկրորդը՝ 50 կ.։ Դիմել հեղինակին՝ Эчміадзинъ, Академія, М. Абегянъ.—Թիֆլիսում կարելի է դիմել Արտ. Աբեղեանին, Ներսիսեան դպրոց կամ գրավաճառներին։

(օ. մ.) (141) 4—6

Электропечатня «ЭКОНОМІЯ» Акакъ Мугдусіаколовъ съ С-мя Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.